

8195

281.6

34-20



04 NOV 2009

ԿՈՐԱՊԿՏ ԶԱՂՈՒԲԵԱՆ

ԹԵՄԱԿԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

Ե Ի

ՄԱՏԹԵՆՍ II ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

84/344

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան ՄՆ. Մարտիրոսեանցի, պուլ. փող. № 3.

1911

16

09.07.2013

8195

13-423a

3816

34-20

20 Ն

Ամենայն Հայոց Մատթէոս II Կաթուղիկոսի վաղաժամ մահը մեծ կորուստ էր Հայոց ազգի համար:

Ծանր վիշտ պատճառեց այդ յանկարծակի մահը մանաւանդ հայ հասարակութեան այն մասին, որը մեծամեծ յոյսեր էր տածում, թէ այդ ժողովրդասէր Կաթուղիկոսին կ'աջողուի վերանորոգել մեր եկեղեցական-հասարակական հիմնարկութիւնները ժողովրդական կամ սահմանադրական սկզբունքներով:

Պատկանելով հասարակութեան այդ մասին՝ ես ես ոչ միայն մեծամեծ գործեր էի սպասում Մատթէոս II Կաթուղիկոսից, այլ և կարծում էի, որ հասարակութեան ամեն մի գիտակից անդամ պարտաւոր է իր ոյժերի չափով աջակցել նորընտիր Հայրապետին, որ նա հնարաւորութիւն ունենայ աշողութեամբ իրագործելու իր ժողովրդասիրական ծրագիրը:

Ոգևորուած այդ գաղափարով՝ ես փորձեցի պարզել հայ հասարակութեան այն ուղին, որով սկսել էր ընթանալ Իզմիրեան Կաթուղիկոսը իր ծրագիրը իրագործելու համար, ամենազգոյշ և շրջահայեաց քայլերով, համբերութեամբ և քրիստոնէական հեղութեամբ տանելով իր ծանր խաչը, կամաց կամաց մաքրելով իր առջևից պատահած ներքին և արտաքին խոչնդոտները:

Ես գիտաւորութիւն ունէի՝ քննելով Իզմիրեան Կաթուղիկոսի սկսումները տնտեսական, դպրոցական եւ վարչական ճիւղերում, որոշել ու պարզել այն նոր ուղղութիւնը, որով պիտի ընթանար Մատթէոս II-ի կաթուղիկոսութիւնը:

Հաղիւ սկսել էի արծարծել իմ ծրագրի առաջին կէտը, և աւանդ... յանկարծահաս մահը ընդհատեց Իզմիրեանի բեղմնաւոր գործունէութիւնը:



39535-67

1760 unob 1766

Այժմս չը կայ մեր փայփայած գաղափարների հուժկու
ղեկավարը:

Ներկան անմխիթար է, ստղադան մութ և մռայլատառ:

Թող այս փոքրիկ գրքոյկը մի անշուք պսակ լինի վաղա-
մահ Կաթողիկոսի թարմ շիրմին և թող նրա յիշատակը ողե-
ւորէ մեզ, նրա փայփայած սկզբունքների հետեւողներին, որ
աւելի տաք եռանդով գործենք և նախապատրաստենք յաջող
պայմաններ Մատթէոս II Կաթողիկոսի սկսածը շարունակելու:

Ա. Ն.

Ե Ր Կ Ո Ւ Խ Օ Ս Ք

Թեմական խորհուրդների, առ հասարակ թեմական հիմնարկու-
թիւնների վերակազմութեան խնդիրը օրւայ խնդիր է դառնում:

Բոլորվին ճիշտ է նկատում պ. Ա. Քալանթարը, որ թեմ. խոր-
հուրդները թէև նոր սահմանուած՝ այնպիսի տպաւորութիւն են թող-
նում, որ կարծես թէ «միշտ գոյութիւն են ունեցել մեզանում», այն-
քան «սովորական, ընտանի, բնական» են թւում նրաք այսօր:

Այո՛, այդպէս է. ВЪ НОВИЗНѢ СТАРИНА СЛЫШИТСЯ,—նորի մէջ
հինն է լսում:

Մեր ժողովրդական եկեղեցին, աղատուելով բիւրօկրատական
կապանքներից, որ նրա վզին փաթաթել է 1836 թ. «Պօթէնիէն», հինն
է յիշեցնում՝ քրիստոնէական առաջին դարերի զուտ ժողովրդական իր
կազմակերպութեամբ: Այժմեան եկեղեցին ամենից շատ հեռացել է
այդ հնից իր թեմական կազմակերպութեամբ, որի վերանորոգելը օրւայ
խնդիր է դառնում այսօր:

Այդ խնդրի շուրջը լարւում է տաք բանակութիւն, որից խուսափելու
իրաւունք չեմ համարում ինձ համար, մանաւանդ երբ «Մշակում» լոյս
տեսած իմ առաջին իսկ յօդուածից (№ 226) — համլէտի խօսքերով
ասած — «խոցուած այծեամբ իրեն տանջում է»:

Ես խիզախում եմ առանձին գրքոյկով հրատարակելու իմ տեսու-
թիւնները, որոնք հանգուցեալ կաթողիկոսի թեմական վերանորոգու-
թեան նուիրած ձեռնարկութիւններն են մեկնաբանում: Բանակուա-
կան ձև ունին իմ այս տեսութիւնները: Ճիշտ է նկատել Իվան Ակսա-
կովը, որ յաճախ տաք վիճաբանութեան մէջ աւելի սուր կերպով
արտայայտուած է լինում ճշմարտութիւնը, քան պաղ և ակադեմիա-
կան ոճով գրուածներում:

Եթէ ինձ աջողուի հայ հասարակութեան ուշադրութիւնը գրաւել
թեմական և վանքապատկան կալուածների և արդիւնքների կար՝որ
հարցի վրա—քանի որ այդ գոյքերը և կալուածները մեր ազգային
հարստութեան գրեթէ կէսը կազմելով՝ մինչև այսօր մատնուած են
կորստի և յափշտակութեան—ես իմ նպատակին հասած կը լինեմ:

Իսկ եթէ իմ խորհրդածութիւնների մէջ հայ հասարակութիւնը գտնէ այդ հարցի լուծման գէթ մի շառաւիղ, եթէ ընթերցողը այս գրքոյկը կարդալուց յետոյ զգայ և համոզուի, որ թեմական և վանքապատկան գոյքերը և արդիւնքները կորստից աղատելու միակ միջոցը նրանց ժողովրդական ընտրական կազմակերպութիւններին յանձնելն է նման մեր թխական կազմակերպութեան—այն ժամանակ ես իբրև օրագրութեան մի համեստ պաշտօնեայ՝ լիովին վարձատրուած կը լինեմ:

Դժուար չէ ըմբռնել իմ հիմնական սկզբունքը. ինձ թւում է, որ մեր հասարակական և ազգային առաջադիմութեան միակ ուղիղ ճանապարհը—հետզհետէ ժողովրդական իրաւունքների ընդլայնելն է, թէ եկեղեցական-վարչական ասպարէզում (ընտրովի առաջնորդներ և աջորդներ), թէ կրթական գործում (կենդրոնական և թեմական դպրոցական խորհուրդներ՝ կրթական գործը ամբողջացնելու համար) և թէ տնտեսական խնդիրներում (թեմական խորհուրդներին յանձնել թեմական և վանքական գոյքի շահագործութիւնը):

Ապագայ Կաթողիկոսը այս հիմնարկութիւններին և ժողովրդական ներկայացուցիչներին պիտի ընտրէ իրեն օգնական և խորհրդատու: Մատթէոս II Կաթողիկոսի օրինակը թող մեզ համար ամենալաւ օրինակը լինի:

ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

I

Որքան էլ ճիշ ու աղաղակ բարձրացնեն մեր հնամուկները, այժմեան կաթողիկոսութեան սկզբունքային և անսկզբունք հակառակորդները, հայ հասարակութեան ուշադրութիւնից չէ կարող վրիպել մի երևոյթ, որ նորընտիր կաթողիկոսը աշխատում է ըստ չափու կարողութեան իրազօրծել մի սկզբունք, որը ամեն մի ժողովրդական և հասարակական հիմնարկութեան արդիւնաւէտ ընթացք տալու միակ փրկարար միջոցն է ճանաչուած:

Այդ սկզբունքը մենք լաւ գիտենք, ամենքս էլ ամենայն օր կրկնում ենք, թէ մեր եկեղեցին և նրա հետ կապուած բոլոր հիմնարկութիւնները ժողովրդական պիտի լինեն, այսինքն ժողովրդի շահերին ծառային և — որ կարեւորագոյնն է — ժողովրդի ընտրեալների ձեռքով ղեկավարուեն — pour le peuple et par le peuple.

Զարմանալի բան. մեր հնամուկները ևս չարունակ կրկնում են այդ սկզբունքը: Սակայն երբ մէկը փորձ է անում խօսքից անցնել գործի և մեր հասարակական կեանքում իրականացնել այդ սկզբունքը, նրանք անմիջապէս վայնասուն են հանում, թէ մեր եկեղեցին կործանուեց, քանդուեց, աւերուեց և մոխրակոյտ դարձաւ, թէ մէր բոլոր հիմնարկութիւններն ևս նոյն ճակատագրին են մատնուած, ազդը կործանում է...

Փորձենք վերլուծել այն ամեն հրատապ հարցերը, որ ժամանակը և մեր կեանքի պայմանները յարուցել՝ օրուայ խնդիր են դարձրել և այժմեան կաթողիկոսութիւնից սպասւում է նրանց արդիւնաւոր և ազգաշէն լուծումը:

Իմ կարծիքով՝ ամենքից հիւանդոտ, ամենքից անյետաձգելի և չուտափոյթ բարւոքում պահանջող հարցը մեր եկեղեցական, վանքապատկան և դպրոցական եկամուտների և կալուածքների, կամ ընդհանուր խօսքով ասած՝ մեր բոլոր հիմնարկութիւնների տնտեսական խնդիրն է: Առանց տնտեսական հարցի բարւոքման անկարելի է սպասել որեւէ այլ բարւոքում. սա մի անհերքելի և տարրական ճշմարտութիւն է, որի գէտ ոչ ոք չէ վիճում:

Ի՞նչ է այդ հարցի կանոնաւոր լուծումը:

Եթէ մենք մի յետադարձ հայեացք ձգենք անցեալի վրա, մենք կը նկատենք երկու գլխաւոր կէտեր: Մեր ծխական կալուածքները եւ արդիւնքները որոշ չափով կարգի բերուած եւ կորստից ազատուած՝ յանձնուած են ծխական համայնքների եւ ընտրեալ ծխական հոգաբաժնիքներին ներքին տնօրինութեան: Այստեղ հարցը — մենք ամենքս խոստովանում ենք — կանօնաւոր ուղղութեան վրա է դրուած: Ծխական արդիւնքներն եւ կալուածքները ամբողջապէս կառավարում է ընտրովի եւ պատասխանատու ծխական հոգաբարձութիւնը հոգեւոր վարչութեան հսկողութեամբ եւ ծխական ժողովի վերահսկողութեան եւ իրական կօնորոյի տակ:

Ի՞նչ պէտք է անէ այժմեան Կաթուղիկոսը այս հարցի վերաբերմամբ:

Հարկաւոր է մի կողմից նոր կանօններ մշակել այդ եկամուտները եւ կալուածքները արդիւնաւոր կերպով շահագործելու համար եւ կանօնաւորել ծխական ժողովների եւ հոգաբարձուների գործունէութիւնը:

Միւս կողմից հարկաւոր է հոգեւոր վարչութիւնից պահանջել խիստ հսկողութիւն, որ ծխական համայնքները եւ հոգաբարձութիւնները իրանց գործունէութեան ասպարիզում չը շեղուեն տիրող կանօններից:

Այս տեսակէտից քննեցէք մեր հոգեւոր վարչութեան գործունէութիւնը, ցոյց առէք այդ գործունէութեան անբաւարարութիւնը, մերկացրէք վարչական անձանց եւ մարմինների անգործունէութիւնը, մերկացրէք կատարուած զեղծումները, եւ հայ հասարակութիւնը ձեզ հետ կը լինի: Այդ բոլորով դուք օգնած կը լինէք եւ այժմեան կաթուղիկոսութեան:

Սակայն չը պէտք է մոռանալ, որ եթէ մեր ծխական գործերը այնուամենայնիւ կազմում են, եթէ հասարակական եւ եկեղեցական հիմնարկութիւնների միջոցները բոլորովին չեն աճում, կամ չառ քիչ են աճում, կամ նոյնիսկ վատնում են, այդ բանում մեղաւորը ամենից առաջ ինքը հասարակութիւնն է եւ ոչ հոգեւոր վարչութիւնը, որին մենք ինքներս յատկացնում ենք միմիայն վերահսկողական դեր: Ուրեմն այս դեպքում ամենից առաջ պէտք է արթնացնել հասարակութիւնը, պէտք է յորդորել նրան ղէպի գործունէութիւն, պէտք է վերջապէս մտրակել նրա սպանիչ անտարբերութիւնը ղէպի հասարակական շահերը... Ահա ազնիւ մամուլի, բարեխիժ գրողի, անկաշառ եւ անխաբար քրէի վեհ նշանակութիւնը:

Կրկնում եմ, այս հարցի վերաբերմամբ այժմեան հոգեւոր վար-

չութիւնից պէտք է սպասել, որ նա մշակէ խելացի եւ հաստատուն կանօններ, որոնցով ընթանայ ժողովրդի ծխական-ինքնավարական գործունէութիւնը եւ արթուն հսկողութիւն պահէ, որ այդ գործունէութիւնը օրինապահութեան շուրջով կատարուի:

Աջակցեցէք այդ հարցում Կաթուղիկոսին, օգնեցէք նրան ձեր գիտութիւնով, ձեր կեանքի փորձով, ձեր վարչական հմտութիւնով, որ նախ լաւ մշակուած լինեն այդ կանօնները, եւ յետոյ՝ թե ու թիկունք եղէք նրան, որ նա այդ կանօնները հաստատել տայ մարմնաւոր իշխանութեանը: Երկրորդ՝ ընտրեցէք բանիւրուն, խելացի եւ գործունեայ առաջնորդներ եւ յաջորդներ, որոնք պարտաճանաչութեամբ կատարեն իրանց պաշտօնը: Այդ ընտրական իրաւունքը եւս այժմեան կաթուղիկոսութիւնը վերապահում է ժողովրդին:

Այս ամենը իրաւունք ունի սպասելու հասարակութիւնից այժմեան Կաթուղիկոսը, որ ինքը մենակ չը լինի: Ժամանակ է հասկանալ, որ ամեն բան չէ կարելի ձգել մի անձի վրա, թէկուզ ազգընտիր եւ մեծ ամեծ արժանաւորութիւններով ու ընդունակութիւններով օժտուած մի անձնաւորութիւն լինի նա:

Այս ամենը իրաւունք ունի պահանջելու ազգից այժմեան Կաթուղիկոսը: Երդօք հայ հասարակութիւնը կատարել է եւ կատարում է իր այդ պարտքը:

Թող խղճի մտօք պատասխան տան իմ այս հարցին:

Ծխական կալուածքներից յետոյ գալիս է Թեմական եւ վանքական ազդիւրների եւ կալուածքների բարելաւման ամենահիւանդոտ խնդիրը: Անցեալը ամենատխուր եւ մտայն էջեր է ներկայացնում: Թեմական եւ վանքական բոլոր գոյքերը անցեալում ամբողջապէս յանձնուած են եղել Թեմական առաջնորդների, յաջորդների եւ վանքական ու կօնսիստօրական կրօնականների ու խժռողների անսահման եւ անկօնարօշ տնօրինութեան: Եւ ի՞նչ ենք տեսնում այսօր. տանեակ տարիների ընթացքում այդպիսի վատնուել, գողացուել եւ յափշտակուել են հարիւր-հազարներ, նոյնիսկ միլիօններ եւ մտել են այս կամ այն անհատի զրպանը եւ ուրկորը:

Երեւանի Թեմական կալուածների եւ արդիւնքների մասին առաջին հապճեղ ցուցակազրուած եւ հրատարակուած տեղեկագիրը մի բոլորովին նոր էջ է բաց անում հայ հասարակութեան առջև: Այդ տեղեկագրից հայ հասարակութիւնը լաւ ըմբռնեց, թէ ինչ մեծամեծ կորուստներ է ունեցել ազգը անցեալում հոգեւորականութեան այդ միահեծան եւ անկօնարօշ կառավարութիւնից: Եւ, վստահ եմ, մի անգամ ըմբռնելով այդ պոկաւորուող երեւոյթի իմաստը, հայ հասա-

րակութիւնը այլևս թոյլ չի տայ, որ նոյն պակասաւոր երեւոյթը շարունակուի: Այժմեան Կաթողիկոսը ձեռնարկել է այդ հարցի լուծումը, նրա վերաբերմամբ ևս գործադրելով նոյն ժողովրդական ամենափրկիչ սկզբունքը:

Ծխական ինքնավարութեան անալոգիայով վերջին ժամանակներում ձեռնարկուած է սահմանել և թեմական ինքնավարութիւն: Փորձում է մի կողմից՝ հաստատել — առ այժմս ժամանակաւորապէս — պարբերական թեմական ժողովներ և մնայուն թեմական խորհուրդներ, իբրև թեմական ժողովների գործադրական մարմիններ:

Միւս կողմից նշանակովի թեմական առաջնորդների և վիճակային յաջորդների տեղ սահմանում է ընտրական առաջնորդութիւն և յաջորդութիւն:

Ահա այդ ընտրովի հիմնարկութիւնները և անձնաւորութիւնները կոչւում են ամբողջ ժողովրդի արթուն հսկողութեան տակ ղեկավարելու թեմական գործերը, ազատելու տասնեակ տարիների ընթացքում կորստի մատնուած ահագին հասարակական գույքեր և շահագործելու այդ գույքերը յօգուտ հասարակական և ազգային բազմաթիւ կարիքների: Քանի՛ քանի՛ հասարակական հիմնարկութիւններ ապահովուած կը լինէին այսօր, եթէ ի սկզբանէ ապահով ձեռքերում լինէին այդ արդիւնքներն ու կալուածքները գէթ այն չափով, ինչ չափով ապահովուած են եղել ծխական կալուածներն ու արդիւնքները:

Այս արմատական բարենորոգման ձեռնարկութիւնը — ինչ էք կարծում — հաւանութիւն գտնում է մեր կեղծ ժողովրդասէր հնամուկների կողմից: Ոչ երբէք: Այդ ամենը նրանք անուանում են «կօնվենտական» ձեռնարկութիւններ...

Հայ հասարակութիւնը արդէն լսում է այն աղաղակները, որ արձակում են անգործութեան մատնուած հնամուկ կուսակցութեան կողմնակիցները, համախմբուած մի անընթերցող շարաթաթերթի շուրջը: Զգում են դրանք այսօր, որ իրանց անկօնորօլ և միահեծան տիրապետութեան օրերը հաշուած են և ահա պատճառ նրանց օրհասական աղաղակների և գոչիւնների: Դադուած ինքնասիրութիւնը չէ կարող ամենատարրական հաւասարակշռութիւն պահել իր սրտի իդէներ թափելու և վայելուչ հասարակական գիրք պաշտպանելու մէջ:

Այդ վիճակը, ղեկավար ունենալով այն սեպուղիներին, որոնք ընտրական սկզբունքից սարսափում և կծկում են, ինչպէս Մեֆիստօֆելը խաչի առջև, մինչև անգամ ձև Պուրիշկինի չէ վարանում աչք ու ունք անելու որոշ հասցէով, «արմատական», «չեղափոխական», «կօնվենտ» և ուրիշ այսպիսի «սարսափելի և խիստ սոսկալի» բառեր

գործածելով: Իրանց խելքով՝ ուզում են, ում հարկն է, մատնացոյց անել, հասկացնել տալ, թէ ինչ անլստահ ձեռքերում են գտնուում այսօր, ներկայ Կաթողիկոսի օրով՝ մեր եկեղեցական հասարակական հաստատութիւնները:

Սակայն ապարդիւն ջանք ու աշխատութիւն:

Այժմեան կառավարութիւնը, որ ինքը ահագին ճիգ է թափում՝ սենատօրական վերաքննութիւններով պետական հիմնարկութիւններում և հաստատութիւններում արմատախիլ անելու հնից տիրող գողութիւնն ու յափշտակութիւնը, մեր կամաւորներից աւելի լաւ գիտէ, որ այժմեան Կաթողիկոսը, անընդհատ օրինապահութիւն քարոզելով, արմատական կամ յեղափոխական ոչ մի հակում չունի և չէ էլ կարող ունենալ... Քաջալերուած նոյն կառավարութեան բարի օրինակով, նորընտիր Կաթողիկոսը հաստատապէս վճռել է ոչ միայն փրկել գողութեան և յափշտակութեան մատնուած մեր թեմական և վանքապատկան կալքերը, այլ և այնպիսի պայմաններ ստեղծել, որ ապագայում այլևս անհնար լինի այդ գողութիւնը եւ յափշտակութիւնը: Ահա այս միանգամայն օրինական և իր սուրբ պարտականութիւնը կատարելով, այժմեան Կաթողիկոսը նախ հրատարակեց էջմիածնի վանքի տնտեսական հաշիւը և երկրորդ՝ թեմական ժողովների և նրանցից ընտրուած խորհուրդների կառավարութեան յանձնեց մեր բոլոր թեմական և վանքապատկան կալուածները, այսինքն՝ արաւ այն, ինչ որ վաղուց արուած էր ծխական գույքերի վերաբերմամբ:

Որոնք այդ միանգամայն անմեղ ձեռնարկութեան մէջ, որ կատարուած է կառավարութեան գիտութեամբ և նրա աչքի առջև, «կօնվենտական», «չեղափոխական» միտումներ՝ դա կարող են միայն նրոնք, որոնք, սկզբունքով դէմ լինելով այդ բարենորոգութիւններին, չեն համարձակուում հրապարակօրէն քարոզել իրենց իսկական դիտաւորութիւնները, այլ թաքնում են օրինականութեան քողի տակ...

Սրանից մի քանի ամիս առաջ հրատարակուեցին թեմական և վանքական գույքերի և արդիւնքների կառավարութեան նոր կանօններ, որոնց նպատակն է ժողովրդի ընտրախնիների ձեռքը յանձնել այդ գույքերի տնօրինութիւնը: Եւ դուք ինչ էք կարծում, որեւէ արձագանք գտաւ այդ խելացի և սկզբունքային կարգադրութիւնը, քննուեցին նրա լաւ և թերի կողմերը:

Ոչ. հասարակական կարծիքը շատ քիչ զբաղուեց նրանով և այսօր համարեա մոռացութեան է մատնուում: Մինչդեռ հասարակական կարծիքը, մամուլը, անընդհատ պիտի քարոզէր, որ այդ կանօնները օր առաջ և ամեն տեղ գործադրուեն, թեմական և վանքապատկան

արդիւնքների շահագործութիւնն անցնի ժողովրդի ձեռքը և նրանից գոյացած արդիւնքը գործադրուի հանրօգուտ նպատակներին:

Թող պատասխան տան այժմեան կաթնուղիկոսութեան մոլեռանդ դատափետիչները. հարկաւոր է թեմական և վանքական գոյքերը ևս յանձնել ընտրովի թեմական խորհուրդներին՝ ընտրովի առաջնորդների նախագահութեամբ կազմուած. հարկաւոր է, որ այժմեան բոլոր նշանակովի առաջնորդները և յաջորդները հրաժարական տան և նրանց փոխարինեն ժողովրդից ընտրուած առաջնորդներ և յաջորդներ:

Եթէ այս կարեւոր խնդրի լուծումը նրանք անհրաժեշտ և անյետաձգելի են համարում, հապա ինչո՞ւ դրանով ամենեւին չեն զբաղւում, այլ իրանց բոլոր էջերը նուիրում են այն միակ հարցին, թէ այժմեան կաթնուղիկոսութիւնը մեծ է ընտրում իրան աշխատակից և խորհրդական և ինչո՞ւ չէ ընտրում իրանց ցանկացածին, կամ իրանց կուսակցին:

Որքան ես հետեւի եմ, այժմեան կաթնուղիկոսութեան ամբողջ օպպօզիցիան շրջում է միմիայն այդ հարցի շուրջ բոլորը: Համոզւած եմ, որ եթէ այժմեան կաթնուղիկոսութիւնը շրջապատուած լինէր այդ quasi օպպօզիցիական կուսակցութեան պատկանող անձնաւորութիւններով և տասն անգամ աւելի քիչ գործ արած լինէր, անմիջապէս այդ օպպօզիցիան կը փոխէր իր «ուղղութիւնը» և այժմեան լայն ժողովրդականութիւնը անմիջապէս կը փոխարինէր տափակ շողորորթութիւններին:

Սակայն հնարաւոր է այդ, հնարաւոր է, որ թեմական և վանքական աղբիւրները յանձնեն նախկին վատնողների և յափշտակողների արքանեակներին և աշակերտներին. հնարաւոր է, որ ամեն ինչ մնայ հին դրութեան մէջ և նորից նշանակովի առաջնորդները և յաջորդները շարունակեն նախկին րէժիմը:

Ահա ինչ է նշանակուած բաւարարութիւն տալ այդ կուսակցութեան պահանջներին: Պարզ է, որ նրանք այժմեան կաթնուղիկոսութիւնից անկարելին են պահանջում: Կամ Կաթնուղիկոսը պիտի դաւաճանէ իրան, իր ընտրած ժողովրդական սկզբունքին, կամ նա պիտի հաստատ մնայ իր ընտրած փրկարար ճանապարհի վրա և օր առաջ կարգի բերէ թեմական արդիւնքները և բոլոր թեմական և վանքապատկան կալուածների կառավարութիւնը ժողովրդից ընտրուած մարմիններին տնօրինութեանը յանձնէ:

Եթէ այդ վերջին նպատակը համակրելի է հայ ազգի ամբողջութեանը, որ անկասկած է, այն ժամանակ այժմեան կաթնուղիկոսութեան գործունէութիւնը ոչտք է քննիլ այդ տեսակէտից, թէ արդեօք Կաթնուղիկոսի այժմեան շրջապատողները և խորհրդականները ընդու-

նակ են այդ գերի համար, թէ ոչ: Այդ տեսակէտից օպպօզիցիական մամուլը ահագին ծառայութիւն կարող էր մատուցանել հասարակական շահերին, քննելով գործը և ոչ գործող անձին ենթարկելով ոստիկանական խուզարկութեան, ինչպէս այդ անում է ոհմակի բերան շարաթաթերով գրեթէ իր ամեն մի համարում: Պէտք է հասարակութեանը ցոյց տալ այդ անձանց գործելակերպը, նրանց անպատրաստութիւնը, ապիկարութիւնը, շարամուտիւնը և անընդունակութիւնը:

Այսպիսի քննութիւնը թէ օգտակաւ կը լինէր գործին, և թէ այդպիսի քննադատի կողմը կը լինէր հասարակական համակրութիւնը:

Այն ժամանակ հասարակութիւնը իսկապէս կը տեսնէր, թէ այժմեան Կաթնուղիկոսի այս կամ այն խորհրդականները և օգնականները իրանց տեղում են թէ ոչ, Կաթնուղիկոսի նպատակները ընդունակ են իրագործելու: Եւ այն ժամանակ մամուլի խօսքը ոյժ կը ստանար, Կաթնուղիկոսի աչքում ահագին կշիռ կունենար, և անհամապատասխան անձանց կը փոխարինէին ուրիշ աւելի համապատասխան անձինք:

Ես ամենեւին ցանկութիւն չունեմ ջատագով լինելու այժմեան Կաթնուղիկոսի աշխատակիցների գործունէութեանը: Ես ասում եմ, որ թեմական խորհուրդները և ընտրովի առաջնորդներն և յաջորդները անպայման անհրաժեշտ են մեր այսօրուայ հանգամանքներում: Աւելին կասեմ. ես չը գիտեմ աւելի լաւ միջոցներ թեմական և վանքապատկան ահագին հարստութիւնները յափշտակութիւնից և կորստից փրկելու համար: Ինչ թւում է, որ Կաթնուղիկոսի ընտրած միջոցները ուղիղ են, թեմական և վանքապատկան կալուածները և արդիւնքները պիտի նոյն ձևով կառավարուեն և շահագործուեն, ինչ ձևով որ կառավարւում և շահագործւում են մեր եկեղեցական-ծխական արդիւնքներն ու գոյքերը:

Այս տեսակէտից քննեցէք անձանց և հիմնարկութիւնների գործելակերպը և նրանց բռնած ընթացքը: Այս նշանաբանով արթննալիք և արթննալիք պահեցէք հասարակական կարծիքը, որ հասարակական շահը չը տուժէ այդ անձերից և հիմնարկութիւններից:

Իսկ ինչ է անում quasi հակադիմական մամուլը: Նա ամենայն օր կրկնում է, որ իր կուսակցական այս կամ այն անձնաւորութիւնը հեռացած է էջմիածնում գեր խաղալուց և նրա փոխարէն գեր է խաղում այս ինչ, կամ այն ինչ անձնաւորութիւնը: Ուստի քանդում է էջմիածինը, կործանում է ազգը...

Բարեբախտաբար այդ աղաղակներին հաւատացող չը կայ: Հայ հասարակութիւնը բոլորովին այլ բան է տեսնում և նշմարում: Հայ հասարակութիւնը արդէն նկատում է, որ նոր Կաթնուղիկոսը հետզհետէ ընդարձակում է ժողովրդի ընտրեալների իրաւունքները և փոխանակ

այս կամ այն պատահական անձն ստորութեան՝ ժողովրդի ընտրեալներին է կանչում իրեն օգնութեան: Այս նոր ուղղութիւնը կարօտ է աջակցութեան և քաջալերութեան, և ոչ անարդար և անպատկառ արձակումներին:

ԺՈՂՈՎՐԴԻ ՍԿՂԵՐՈՒԹԻՄ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ

II

Յիշում եմ, պ. Ղ. Աղայեանը մի անգամ նկատել էր, որ ժողովրդական, կամ ընտրական սկզբունքը լաւ բան լինի գուցէ, բայց ժողովուրդը մեղանում շատ անտարբեր է դէպի հասարակական շահերը, քիչ է հետաքրքրուում իր հասարակական գործերով և աւելի քիչ օգտուում իր իրաւունքներից:

Միանգամայն ճիշտ է այդ նկատողութիւնը համեմատական տեսակէտից: Ես ընդունում եմ, որ եթէ մի հասարակութիւն, մի ազգ, մի ժողովուրդ, վաստակելով ընտրական իրաւունք, իրապէս ընտրութիւններին մասնակցում է իրա իրաւասունների միմիայն 10—20 տոկոսով՝ ոչ աւելի, և այդ երևոյթը տեղական բնոյթ ունի, դա ապացոյց է այդ ժողովրդի, այդ հասարակութեան անտարբերութեան դէպի իր ընդհանուր շահերը:

Սակայն ինքն ըստ ինքեան այդ երևոյթին պէտք է յատկացնել և համեմատական նշանակութիւն:

Գերմանիայում վերջին ընտրական պայքարին մասնակցեց իրաւասունների 70—80 տոկոսը, մինչդեռ սովորաբար այդ տոկոսը 60-ից չէ աւելանում: Ֆրանսիայում այդ տոկոսը աւելի պակաս է: Կան ազգեր, որոնք մասնակցում են իրաւասունների աւելի պակաս տոկոսով, որը իջնում է 40—30-ի, այն էլ ընդհանուր, կամ համազգային ընտրութիւններում: Տեղական ընտրութիւններին ժողովրդի մասնակցութիւնը սովորաբար աւելի թոյլ էր լինում:

Սակայն ինչ եղբակացութիւն սրանից:

Պէտք է ոչնչացնել, կամ սահմանափակել ժողովրդի ընտրական իրաւունքներն այնտեղ, որտեղ ժողովուրդը թոյլ հետաքրքրութիւն է արտայայտում դէպի հասարակական գործունէութիւն, և գոր-

ծաղրել ժողովրդական սկզբունքը այնտեղ, որտեղ իրաւասունների տոկոսը զիջուք յիսունից պակաս չէ:

Մեր հնամոնեքը այս հարցին չեն վարանում դրական պատասխան տալու. «Աւելի լաւ կը լինէր, որ այդ (հասարակական) շահերի պաշտպանութիւնը մնար Աստուծոյ կամքով և ազգի վստահութեան քուէով ընտրւած Կաթողիկոսի ձեռքում և նա ինչացի և ազնուամիտ խորհրդականների օգնութեամբ կառավարէր Մար Աթոռի (կարդա կաթողիկոսութեան) իրաւասութեան վերաբերեալ գործերը»*) մինչև այն երջանիկ ժամանակները, երբ հայը կը հաւասարուէր ֆրանսիացուն, կամ գերմանացուն իր հասարակական գործունէութիւնով, իր ընտրութիւններին աւելի գորեզ մասնակցութիւնով:

Այս պատասխանը միանգամայն պարզ է և հասկանալի: Սովորական լեզուով ասած՝ սա նշանակում է. աւելի լաւ է նշանակովի՝ թեմական առաջնորդներ և կօնսիստօրիաներ, քան ընտրովի թեմական ժողովներ և խորհուրդներ՝ ընտրովի թեմական առաջնորդներով. աւելի լաւ է նշանակովի երէցփոխներ և հոգաբարձուներ, քան ծխական ժողով և ընտրովի ծխական հոգաբարձութիւն. աւելի լաւ է պատահական անձնաւորութիւններ, քան կանոնաւոր կենտրոնական ղեկավարող խորհուրդ, որը կանոնաւորութիւն և միօրինակութիւն կարող լինի ստեղծել մեր զարոյցների այժմեան քառասական կեանքում... Մի խօսքով՝ ամեն բան ժողովրդի համար և ոչինչ ժողովրդի ձեռքով, tous pour le peuple et rien par le peuple...

Պէտք է գոհ լինել, որ մեր այժմեան հնամոնեքն այնքան անկեղծութիւն ունեն, որ չեն թաղցնում այսօր իրանց սկզբունքը: Մեղանում աւելի լաւ է, ասում են նրանք, «Աստուծոյ կամօք», այսինքն միահեծանութեան սկզբունքի վրայ յոյս դնել և մեր բոլոր գործերը միահեծան կառավարութեան յանձնել, քան ժողովրդի ընտրեալների ձեռքով ղեկավարել ժողովրդի շահերը: Այս դէպքում միանգամայն փարիսեցութիւն պէտք է համարել նրանց բերանում «ազգի վստահութեան քուէով ընտրւած» դարձուածքը: Ինչ գործ ունի ազգի վստահութեան քուէն այնտեղ, ուր ամեն բան «կամօքն Աստուծոյ» պիտի ղեկավարուի, մանաւանդ, երբ Աստուծոյ կամքն իմանալը և արտայայտելը հոգեորականութեան մենապաճառութիւնը կը լինի:

Սակայն դժուար չէ ամենահաստատ, ջախջախիչ փաստերով ապացուցանել, որ նոյնիսկ մեղանում, ուր գոյութիւն ունի ժողովրդի

*) «Հովիտ» № 27.

սպանիչ անտարբերութիւն գէպի հասարակական շահերը, այնուամենայնիւ ժողովրդական սկզբունքը անփոխարինելի է: Յայտնի է, որ մեր եկեղեցական-ծխական կալուածքները և արդիւնքները՝ ժողովրդի, այսինքն ծխական համայնքների և նրանցից ընտրուած հոգաբարձութիւնների ձեռքով են կատարուում:

Ընդունելով հանդերձ ծխական հիմնարկութիւնների կազմակերպութեան թույլ և պակասաւոր կողմերը, մենք ինչ ենք տեսնում այսօր: Միմիայն այդ արդիւնքների և կալուածքների եկամուտներով մինչև այսօր պահուում են մեր մօտ 500 դպրոցները, որոնք ազգային գոյութեան և առաջադիմութեան մեծագոյն նեցուկն են հանդիսանում: Այդ արդիւնքները մեզ տալիս են տարեկան մօտ կէս միլիօն բուբու գումար, որով մեր մատաղ սերունդը ազգային կրթութիւն է ստանում իր մայրենի լեզուով: Սա մեր հասարակական կեանքի խոշորագոյն երեւոյթն է, որին համաշափ մի այլ հասարակական երեւոյթ հաղիւթ է կարելի լինի մատնացոյց անել:

Միւս կողմից ինչ են ներկայացնում մեր թեմական և վանքապատկան ահագին կալուածներն ու արդիւնքները, լինելով միմիայն հոգեւորականութեան միահեծան իշխանութեան տակ:

Մեր հասարակական շահերի տեսակէտից մինչև մեր օրերը մի ոչնչութիւն, մի կատարեալ դերօ է ներկայացնում այդ ահագին հասարակական հարստութիւնը, մատնուած կորստի, այս կամ այն անհատի յափշտակութեան:

Այստեղ չօշափելի, ակներև և խոշոր առաւելութիւն, այնտեղ անլիճելի և անդառնալի ահագին կորուստ: Սա մի ապշեցուցիչ կօնտրաստ է և միայն կարելի է դարմանալ, թէ ինչպէս այդ երեւոյթը մինչև հիմա անուշադրութեան էր մատնուած ամեն կողմից և միայն նորընտիր Սթուդիոսը նախանձեռնօղ եղաւ այդ հարցի յարուցման:

Ահա ինչու պէտք է ողջունել նոր Սթուդիոսի այս խելացի քայլը և ոչ միմիայն սպասել, այլ ամեն կողմից աջակցել, որ ամեն տեղ օր առաջ սահմանուեն թեմական ժողովներ և թեմական խորհուրդներ և այդ նոր ընտրովի մարմիններին յանձնել թեմական գործերը և թեմական ու վանքակապատկան ահագին հարստութիւնների շահագործութիւնը:

Այդ իսկական և կարեւոր բարենորոգութիւնից ազգը մի այնպիսի խոշոր եկամուտ կունենայ, որով կարճ ժամանակում կարելի կը լինի կրկնապատկել մեր կրթական հիմնարկութիւնների թիւը: Ամենաքիչը թեմական արդիւնքներով կարելի կը լինի բոլոր թեմերում հաստատել բաւականաչափ կենտրոնական երկդասեան ծխ. դպրոցներ, որոնց պակա-

սութիւնը այսօր գրեթէ անօգուտ է դարձնում մեր բոլոր միդասեան դպրոցների գոյութիւնը:

Այն, այդ բարենորոգութիւնը կը լինէր նոր ուղղութեան ծրագրի ամենափայլուն կէտը, այն ժողովրդական պրօգրամի, որը սարսափեցնում է ժողովրդական սկզբունքի թշնամիներին և «Աստուծոյ կամօք» միահեծանութեան երկրպագուներին, որոնք որոշ յետին դիտաւորութեամբ պնդում են, թէ ժողովրդական սկզբունքը նսեմացնում, կամ նուազեցնում է կաթուղիկոսական իրաւունքները: Ո՛չ երբէք: Նոր ուղղութեան նախանձախնդիրը երբէք մտածել անգամ չէ կարող, թէ դրանով նսեմանալ կամ նուազել կարող են կաթուղիկոսական իրաւունքները: Նրանք՝ այդ իրաւունքները մնում են իրանց տեղը, բայց իրաւորւում են այնպիսի հիմնարկութիւնների և հաստատութիւնների միջոցով, ուր հասարակական շահերը գերադասուած կը լինին մասնաւոր շահերի և հոտմով ձգտումների: 2^է որ ինքը՝ կաթուղիկոսութիւնը մեր անցեալից ժառանգած հասարակական շահերի մի գերագոյն արտայայտութիւն է, որը պիտի ժամանակակից ձևերով էլ արտայայտուի:

Մինչդեռ այսօր միահեծանութեան տարրը ամեն տեղ մատնուած է չքանալու և նա իր վերջին օրերն է համարում: Ամեն տեղ, սկսուած հասարակական կազմի ամենափոքրիկ բջիջներից մինչև բարձրագոյն կազմակերպութիւնները օր առաջ գործադրում են ժողովրդական սկզբունքը, առանց մաղաչափ ուշադրութիւն դարձնելու այն հանգամանքի վրայ, որ ժողովրդի մեծամասնութիւնը սկզբում որոշ չափով անտարբերութիւն է ցոյց տալիս գէպի իր ընտրական իրաւունքները, գէպի հասարակական ինքնագործունէութիւն:

Միևնոյն ժամանակ չը պէտք է մոռնալ, որ ժողովրդական սկզբունքի գործադրութիւնը ստեղծում է և այնպիսի հիմնարկութիւններ, որոնք դաստիարակում են նոյն ժողովրդին, ընտելացնում են նրան հասարակական գործունէութեան, որի համար առնելով մի անգամ՝ ժողովրդի մեծամասնութիւնը իր ձեռքը կառնէ իր հասարակական գործերը, իր ընտրական իրաւունքները և հասարակական պաշտօնավարութիւնը կը յանձնէ իր լաւագոյն ընտրեալներին:

Միայն տյգպիսի հիմնարկութիւնների օղնութեամբ կարելի է սպասել, որ հայն ևս մի օր ինքնագործունէութեան և ինքնավարութեան ասպարիզում նմանուի աւստրիացուն, ֆրանսիացուն, նոյնիսկ գերմանացուն, հաստատելով Լօրէնց Ֆօն-Ջաէյնի այն միտքը, թէ ժամանակակից ազգային կեանքը արտայայտում է նրան կազմող բոլոր սկզբնական և բարձրագոյն ինքնավարական հիմնարկութիւնների և մարմինների ինքնագործունէութեամբ:

Ուստի մենք երբեք չը պէտք է վհատինք և թուլանանք հասարակական նոյնիսկ սպանիչ անտարբերութեան առջև և ձեռք վերցնենք ժողովրդական սկզբունքից: Քաւ լիցի. շեշտելով մեղանում այդ պակասաւոր երեւոյթը, որ սակայն վերջ ի վերջոյ յաւիտենական չէ, մենք անհամեմատ աւելի շատ պիտի քարոզենք ժողովրդական սկզբունքի հնդարձակ իրագործումը մեղանում, որովհետեւ ինքնավարական հիմնարկութիւնները միեւնոյն ժամանակ պարունակում են իրանց մէջ միջոցներ ժողովրդական սպանիչ անտարբերութեան դէմ:

Ժողովրդական սկզբունքը միայն ընդունակ է խորտակելու ժողովրդական անտարբերութիւնը:

ԹԵՄԱԿԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԶՆՈՒԹԻՒՆԸ

III

Թեմական վերանորոգութիւնների վերաբերեալ կաթողիկոսական կարգադրութիւնները երկու տեսակէտից կարելի է քննել—նպատակայարմարութեան և օրինականութեան տեսակէտից:

Սակայն՝ նախ քան այդ կարգադրութիւնները քննելը՝ ճշտօրէն պէտք է որոշել, թէ ինչ է ձեռնարկել այժմեան Կաթողիկոսը այդ խնդրի վերաբերմամբ:

Երբ նորընտիր Կաթողիկոսը առաջին անգամ այցելեց Էջմիածին, արդէն գոյութիւն ունէին թեմական ժողովները և խորհուրդները, որոնց գործունէութիւնը սկսուեց 1906 թուից, նախկին Կաթողիկոսի օրով^{*)}. նոյնպէս գոյութիւն ունէին ընտրովի առաջնորդներ և յաջորդներ:

Այս կարևոր հանգամանքը մոռանում են նոր կաթողիկոսութեան մոլեռանդ գաղափերիչները, թեթևամտութեամբ շեշտելով՝ թէ թեմական խորհուրդները ստեղծուած են «հինգ քաղցում գրած կօնդակով»: Նրանց յիշողութիւնը այնքան կարճ է, որ այսօր մոռացութեան են տուել, թէ թեմական վերանորոգութեան զխաւոր շարժառիթն եղան նոր պետական օրէնքները, բարձրագոյն հրովարտականքը

*) Տես 1906 թուի Մայիսի 10 Կաթողիկոսական կօնդակը (№ 549):

և հրամանները, որոնց մէջ ամենամեծ նշանակութիւն ունի այս խնդրի վերաբերմամբ «կրօնական համբերողութեան հաստատման» Կայսերական հրամանը:

Համաձայն պետական այդ նոր կարգադրութիւններին՝ օտարազաւան եկեղեցիները, սկզբունքով աղատուելով պետական խնամակալութիւնից, ապագայում իրանք պիտի հոգային իրանց ճակատագրի մասին:

Այդ հիման վրայ մեր եկեղեցին ևս ըստ օրինակի ծխական կադմակերպութեան՝ վերանորոգեց իր թեմական կադակերպութիւնը, որ ամենից շատ հեռացել էր մեր եկեղեցու նախկին ժողովրդական ընաւորութիւնից և ընտրական սկզբունքից:

Կրկնում եմ, այս բոլորը կատարուած էր նորընտիր Կաթողիկոսից առաջ. վերջինը միայն վաւերականութիւն տուեց արող իրականութեանը, ենթարկելով այդ նորամուծութիւնը որոշ—թէ և շատ թերի և անբաւարար—ժամանակաւոր կանօնների:

Ահա այս է նոր Կաթողիկոսի ձեռնարկութիւնը: Նա անշուշտ համակրում է այդ բարենորոգութեանց ոգուն և իրա սրտի ամենամօտ խնդիրներից մէկն է համարում: Ուստի պէտք է ցանկանալ, պէտք է օգնել, պէտք է աջակցել Կաթողիկոսին, որ նա մինչև վերջը կարողանայ տանել, կատարածին հասցնել իր և իր նախորդի այդ բարի ձեռնարկութիւնները և մշտական ու մնայուն օրէնք դարձնել այն, ինչ որ ցայժմ գոյութիւն ունի, իբրեւ ժամանակաւոր կարգադրութիւն:

Ձեռ կարող այստեղ չը շեշտել, թէ որքան զգոյշ և շրջահայեաց է վարուել Կաթողիկոսը այս դէպքում, լոկ հրահանգական ձև և ժամանակաւոր կարգադրութեան դօրութիւն տալով այդ արդէն գոյութիւն ունեցող փոփոխութիւններին:

Որ այդ կարգադրութիւններին ժամանակաւոր և հրահանգական նշանակութիւն է տրուած, դա պարզ երևում է թէ վերնագրից («Ժամանակաւոր հրահանգ թեմական ժողովներին») և թէ վաւերագրութիւնից («Հրամանաւ Տ. Տ. Մատթէոս Բ. Սրբազանագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց»): Ոչ ոքի մտքով չէ կարող անցնել, թէ այստեղ նկատում կայ նոր, նոյն իսկ ժամանակաւոր օրէնք հաստատելու: Կուրացած չարամտութիւնը և անբարեխղճութիւնը ինձ էլ է վերագրում, թէ ես իբրեւ իրաւաբան՝ այդ կարգադրութիւններին յատկացնում եմ օրէնքի ոյժ, անշուշտ ընթերցողի աչքում ինձ վարկաբեկելու նպատակով: Սակայն ուշիուշով կարդացողը անշուշտ կը հասկանայ, որ ես ոչ մի տեղ այդպիսի միտք չեմ յայտնած, թէ վարչութեան ժամանակաւոր կարգադրութիւնները օրէնք են և օրէնքի ոյժ ունեն: Նս

39595-63



ինքն չառ լաւ հասկանում եմ այդ ժամանակաւոր կարգադրութիւն-
ներն իմաստը, օրինական հիմունքները և կիրառութեան սահմանը:

Ունի արդեօք Հայոց Կաթողիկոսը այդպիսի կարգադրութիւններ
անելու իրաւունք, այս հարցին ես յետոյ կը պատասխանեմ: Այժմ
հարկաւոր է քննել, թէ ուրիշ ինչպէս կարող էր վարուել նորընտիր
Կաթողիկոսը այս դէպքում:

Եթէ լսենք մեր հնամուկներին, այժմեան կաթողիկոսութեան այդ
սկզբունքային հակառակորդներին, նորընտիր Կաթողիկոսը էջմիածին
ոտք դնելուն պէս ամենից առաջ պիտի դադարեցնէր և փակէր թե-
մական ժողովները և խորհուրդները իբրև «Պօլօթենիէում» չը նախա-
տեսուած, թէպէտ թեմական ժողովների և խորհուրդների գոյութեան
և գործունէութեան մասին կառավարութիւնը անշուշտ լաւ տեղեակ
լինելով հանդերձ՝ ոչ միայն չէր դադարեցնում, այլև մինչև այսօր էլ
համբերատար է հանդիսացել:

Բարեբաղդաբար նորընտիր Կաթողիկոսը, որը ոչ միայն պար-
տաւոր է օրինապահ լինել, այլ և խղճի մտօր ծառայել եկեղեցու և
ազգի գերագոյն շահերին, չը հետևեց հին օրէնքի տառին, 1836 թ.
«Պօլօթենիէին», այլ հետևեց նոր օրէնքի ոգուն և ներքին իմաստին և
1905 թւականի մեծամեծ փոփոխութիւններից յետոյ՝ հետևեց Բար-
ձրագոյն հրովարտականքին և խոնարհեց ժամանակի պահանջների և
ժողովրդի ձայնի առջև:

Non legis studii, sed juris prudentes esse debet—ոչ թէ
կանօնի տառի ջատագով, այլ օրէնքի իմաստը ըմբռնող պէտք է
լինել: Այս իրաւաբանական կանօնը մանաւանդ պարտաւորեցուցիչ է
այն անձանց համար, որոնք ի պաշտօնէ օրէնքի տառից բարձր պիտի
դիտեն և տիրող օրէնքների ոգուց և ներքին իմաստից նոր իրաւախո-
հութիւն եղրակացնեն:

Ի՞նչ ժամանակի ենք հասել, որ 1905 թուից յետոյ Ամենայն
Հայոց Կաթողիկոսից մեր այժմեան հնամուկները «Պօլօթենիէի» կոյր
հպատակութիւն են պահանջում, մինչդեռ մեր բոլոր կաթողիկոս-
ների օրով և աւելի վատթար ժամանակներում ամենայն հայոց կա-
թողիկոսութիւնը de facto պաշտպանել է իր պատմական իմաստը և
կշիռը հակառակ «Պօլօթենիէի» ոգուն և տառին:

Ո՞րտեղից առաջ եկաւ մեր խաւարամիտների այս կամաւոր փու-
թաշանութիւնը, որին կը նախանձէին Կաթողիկոսներն ու Սուլթանները:

ԹԵՄԱԿԱՆ ՎԵՐԱՆՈՐՈՂՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԱՐՄԱՐՈՒԹԻՒՆ

IV

Թեմական վերանորոգութեան նպատակայարմարութեան մասին ես
արդէն բաւականաչափ խօսել եմ: Նոր Կաթողիկոսը լիովին կողմնակից
է այդ վերանորոգութեան. նա ցանկանում է, որ ծխական ժողովների
և հոգաբարձութեանց վերաբերեալ կանօններն ընդհանրապէս և
թեմական ու վանքական ազգային գոյքերը կառավարուեն թեմական
ժողովների և թեմական խորհուրդների միջոցով, նոյն ծաւալով և նոյն
օրինական հիմունքներով, ինչ ծաւալով կառավարուեմ են ծխական
կալուածները տիրող օրէնքի համաձայն:

Ես մի քանի չեմ կասկածում, որ եթէ իր ժամանակին մեր
հոգևոր կառավարութիւնը ջանար Փոխարքայի «Ժամանակաւոր կանօն-
ներն» մէջ մտցնել տալ Թեմական եւ վանքական գոյքի վերաբերմամբ
նոյն իրաւունքները, ինչ որ Փոխարքան տուեց ծխական գոյքի վերա-
բերմամբ, ոչ մի արգելքի չէր հանգիպի. համոզուած եմ, որ նորընտիր
Կաթողիկոսին կաշոյտի հասնել վերջի վերջոյ իր այդ բարի նպատա-
կին, այն է թեմական և վանքական արդիւնքների և կալուածքների
կառավարութիւնը ևս յանձնել ժողովրդի ներկայացուցիչների անօ-
րինութեանը և ժողովրդական իրաւունքների այդ տեսակ ընդլայ-
նումը պետական օրէնքներով սրբազործել տալ:

Ի՞նչպէս վերաբերուեցին այս խնդրին մեր հնամուկները, այժմեան
կաթողիկոսութեան սկզբունքային հակառակորդները:

Ոմանք աւերեստ խոստովանեցին, իբրև թէ «ոչ որ չէ ասել և չէ
առում, որ մեր գաղութները և եկեղեցական (աւելացրէ՛ք՝ թեմական և
վանքական) կալուածքները չը պիտի կառավարել ժողովրդի ներկա-
յացուցիչների միջոցով»:

Ուրեմն լաւ է իմ պնդմանս՝ «ժողովրդի ներկայացուցիչների
միջոցով» սկզբունքը: Ուրեմն թեմական և վանքական արդիւնքները
գողերից և յաիշտակողներից, կամ առհասարակ կորստից ազատելու
և հանրօգուտ նպատակների ծառայեցնելու համար հարկաւոր են
թեմական ժողովները և խորհուրդները իրանց ընտրովի առաջնորդ
նախագահով հանդերձ:

Բայց նայեցէ՛ք, թէ այդ մասին մինչոչ թերթում, նոյն իսկ
միկնոյն համարում ինչ է խօսում իսկական մարկայի հնամուլը, ոհմակի

ճամարտակը, որը հնամուլական կուսակցութեան կարծիքների խակական արտայայտիչ է հանդիսանում:

«Թեմական խորհուրդները... իբրև միջոց (մեր գործերի արդիւնքը բարեփոխելու», այսինքն՝ թեմական և վանքակապական արդիւնքները կորստից և յափշտակութիւնից ազատելու) գէշ միջոց են, ամենից առաջ այն պատճառով, որ նրանք ապօրինի—կամ նոյնիսկ վիճելի, անորոշ, անստոյգ—միջոց են» («Հովիտ» № 30):

Սա «ամենից առաջ»:

«Իսկ յետոյ, եթէ մինչև անգամ ապօրինի էլ չը լինէին այդ ժողովները և խորհուրդները և «Փոխարքան թոյլ տար ժամանակաւոր գործադրութիւն», ինչպէս պայմանաւորում է Գ. Ենգիբարեանը, այն ժամանակ էլ այդ պարոնի քաջ զինակից Կատօնի կարծիքով այդ հիմնարկութիւնները բանի պէտք չեն, վնասակար են:

«Ո՞վ է ընտրում—բացազանչում է խաւարածու կուսակցութեան ճամարտակը—այդ հոգաբարձուներին, այդ պատուիրակներին և պատգամաւորներին: Հասարակութեան մէջ քուէի իրաւունք ունեցողների մի քսանբորգից սկսած մինչև մի յիսուներորդ մասը միայն: Մնացեալ ահագին զանգուածը մրափում է «սպանիչ անտարբերութեան» մէջ»:

Ես արդէն վերելում չեշտել եմ, որ հասարակական թոյլ մասնակցութիւնը երբէք չէ կարող ստիպել հրաժարուելու ժողովրդական սկզբունքից և նորից վերադառնալու «միահեծանութեան» ընթիւնին: Քոյրը ազգերի զարգացման պատմութիւնը մեզ ամենաշօշափելի փաստերով ապացուցանում է, որ աւելի լաւ է փոքրաթիւ ընտրողների և ընտրեալների յանձնել հասարակական գործը, քան պատահական նշանակովի անձնաւորութիւնների. փոքրաթիւը հետզհետէ շատանում, բազմաթիւ է դառնում, ընտրեալը և ընտրողները իրանց գործը անում են հրապարակով, հասարակութեան աչքի առջև և նրա կօնտրօլի տակ և մութ գործերի համար այդտեղ շատ քիչ ասպարէզ է մնում:

Ես գիտեմ, որ այս սողերով չեմ կարող համոզել մեր խաւարամիտներին, թէ ժողովուրդը իր ընտրեալների ղեկավարութեամբ իր շահերը աւելի լաւ առաջ կը տանի, քան նրան ստրկացնող, անկոշ և պատահական խնամատարները: Կարդացէ՛ք «Հովիտ» շարաթափերի մէջ պ. Կատօնի յօդուածները և դուք կը համոզուէք, թէ ո՞ր աստիճանի թշնամութիւն և ատելութիւն է ըզլում նրա ամեն մի տողից գէպի հայ ժողովուրդը, գէպի նրա ընտրեալները, նրա հոգաբարձուները և պատգամաւորները: Դրանք բոլորը նրա աչքում լոկ պատահական մարդիկ, անվստահելի անձնաւորութիւններ, կասկածելի հասարակական գործիչներ են:

Միակ տարրը, որ հաւատ և վստահութիւն կարող է ներշնչել, դա «խորհրդականներն են», որոնք եթէ կոշուած լինեն իրանց բանակից, անշուշտ միշտ «խելացի և աշխուստ» կը լինեն:

Ժողովրդական սկզբունքի դէմ այդ նոյն պ. Կատօնը բերում է մի փաստ ևս. իբրև թէ այդ սկզբունքը ձեռնթափ է անում Կաթողիկոսին, հրաժարեցնում է Կաթողիկոսին իր իրական իրաւունքներից, մինչև անգամ իր «վետօյի» իրաւունքից:

Նա պնդում է, որ եթէ թեմական առաջնորդին ընտրեց թեմական պատգամաւորութիւնը, իբր թէ Կաթողիկոսը պարտաւոր է անպայման խոնարհել այդ ընտրութեան առջև և հաստատել տալ այդ ընտրութիւնը:

Եթէ ընտրուեց թեմական խորհուրդ և այդ խորհուրդը—ասենք աներեակայելին—վճուեց իրա մէջ բաժանել թեմական գույքը, Կաթողիկոսը ձեռքը ծալած պիտի դիտէ և ուրիշ ոչինչ: Վեր առնենք աւելի կօնկրէտ օրինակ. թեմական խորհրդից ընտրուած՝ Ներսիսեան զպրօցի հոգաբարձուները վճուեցին Ներսիսեան զպրօցի գոյքը յափշտակել, բաժանել իրար մէջ, թաղցնել և այլն:

Այս դէպքում «ի տես բոլորի վեհ. Կաթողիկոսը ձեռնթափ է եղած և հեռուից է միայն նայում, թէ ինչպէս են կողոպտում և վատնում իրանց յանձնուած ահագին հարստութիւնները» («Հովիտ» № 30):

Ես չը գիտեմ, ինչպիսի միամիտ ընթերցողների վրայ է յոյս դնում այս տողերի հեղինակը:

Կարող է գտնուել մի հատիկ մարդ, որ հաւատայ, թէ այդ և նման դէպքում Կաթողիկոսը բացի ձեռնթափ լինելուց ուրիշ ոչինչ չէ կարող անել:

Ժողովրդական սկզբունքը մազաշափ չէ սահմանափակում Կաթողիկոսական իրաւունքները: Այդ և նման դէպքերում Կաթողիկոսը ոչ միայն անմիջապէս կազմալուծ է անում բոլոր գոյութիւն ունեցող խորհուրդներն և ժողովները, այլ մեղաւորներին կարող է ենթարկել ամենախիստ պատասխանատուութեան, օրինական դատի:

Ոչ մի ձեռնթափութեան և չէզոքութեան մասին այստեղ խօսք անգամ չէ կարող լինել:

Այն, ինչ որ առաջ կօնսիստօրիան, կամ այս կամ այն անհատը պիտի անէր, այսօր նրանց տեղը—այն էլ գլխաւոր կէտերում—անում է թեմական խորհուրդը, որին նախագահում է ընտրովի թեմական առաջնորդը: Գործադրողը և ղեկավարողը նորից մնում է թեմական առաջնորդը, սակայն գործը աւելի խելացի կերպով, աւելի բազմակողմանի ուսումնասիրած է լինում: Ես չեմ հասկանում, թէ ինչո՞ւ

ընտրական սկզբունքի գործադրութեան ժամանակ Կաթողիկոսի վեպօն չէզոքանում է:

Կաթողիկոսը ոչ մի դէպքում պարտաւոր չէ հնադանդեկ օրէնք ընտրութեան. ամեն մի ընտրութիւն նա իրաւունք ունի բեկանել և պահանջել նոր ընտրութիւն: Այստեղ Կաթողիկոսի իրաւունքը, իբրև եկեղեցու պետի, անսահման է: Սխալն նա չէ կարող իր կարգադրութիւնով փոխարինել ընտրութիւնը: Սրանով է տարբերուած սահմանադրականութիւնը բռնապետութիւնից, երբ պետը դառնում է և պետ և գործադրող պաշտօնեայ:

Ոչ, կաթողիկոսական իրաւունքները ոչ միայն չեն նոստանում և կաթողիկոսական գործունէութիւնը սահմանափակում ժողովրդական սկզբունքի գործադրութեան ժամանակ: Կաթողիկոսը ոչ միայն ժողովրդից չէ խաբւում, այլ ընդհակառակը, Կաթողիկոսի խելացի և ժողովրդասէր կարգադրութիւնները աւելի լաւ և անկեղծ օրէնք են գործադրում: Կաթողիկոսը այստեղ միանում է իր ժողովրդի հետ և գործում նրա աջակցութեամբ:

Կաթողիկոսին ընտրող ժողովուրդը նրան երբեք չի խաբի, չի մոլորեցնի: Նրան փորձում է խաբել և մոլորեցնել այն ոհմակը, որը «Աստուծոյ կամքով» սկզբունքի տակ միահեծանութիւն է քարոզում, որ ինքը կարողանայ շարունակել նախկին յափշտակութիւնը:

Սակայն հաղիւ թէ աշողութիւն գտնի:

ԹԵՄԱԿԱՆ ՎԵՐԱՆՈՐՈՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՈՐՈՂ ՕՐԷՆՔ

V

Աւելի բարդ և ծանր խնդիր է թեմական վերանորոգութեան վերաբերեալ կաթողիկոսական կարգադրութիւնների քննելը օրինականութեան տեսակէտից:

Այս խնդրում ամենից առաջ պէտք է պարզել, թէ տիրող օրէնքների տեսակէտից Ամենայն Հայոց Կաթողիկոսը իրաւունք ունի՞ այդպիսի կարգադրութիւններ անելու:

Այս հարցին պատասխանելու համար հարկաւոր է նախապէս որոշել, թէ որոնք են մեր եկեղեցու վերաբերեալ տիրող օրէնքները

մեզ հետաքրքրող խնդրի վերաբերմամբ: Անշուշտ, իբրև տիրող օրէնք, ամենից առաջ ի նկատի պէտք է առնել 1836 թուի «Պօլօժենիէն», որը մեր եկեղեցու վերաբերմամբ գլխաւոր, զրեթէ միակ պետական օրէնքն է կազմում մինչև այսօր:

Բաւական է ասել, որ «Պօլօժենիէն» հաստատման օրից անցել է մօտ 75 տարի և այդ երեք քառորդ դարի ընթացքում քիչ չատխոշոր պետական նոր օրէնք չէ սահմանուել մեր եկեղեցու վերաբերմամբ: Իսկ սահմանուած փոքրաթիւ կանօններն էլ ընթացել են ոչ օրէնադրական (պետական խորհրդի քննութեամբ), այլ վարչական ճանապարհով՝ մինստրների կօմիտէի միջով:

Մինչդեռ 1836 թ. «Պօլօժենիէն» հէնց իր հաստատման օրից ոչ միայն անբաւարար է ճանաչուած, այլ նա յաճախ կատարեալ լռութիւն է պահում ամենակարեւոր խնդիրների վերաբերմամբ:

Ինքն ըստ ինքեան «Պօլօժենիէն» պարունակում է երկու տեսակ կանօններ. ա) պետութիւնից հաստատուած կանօններ մեր եկեղեցու իրաւասութեան վերաբերալ և բ) մեր եկեղեցական դարաւոր օրէնքները և կանօնները, որոնք «Պօլօժենիէն» դորութեամբ նորոգան տիրող օրէնքի ոյժ ունեն, որքան և պետական օրէնքները:

Եթէ այդ վերջին կարեւոր հանգամանքը ի նկատի չառնենք, անկարող կը լինենք լուծել մեր եկեղեցու վերաբերեալ ամենաէական խնդիրները, որոնք գոյութիւն ունեն մեր եկեղեցական - հասարակական կեանքում: Որ «Պօլօժենիէն» ընդունում է մեր եկեղեցական կանօնները, իբրև տիրող օրէնք, դա երևում է նրա հետեւալ յօդուածներից:

Յօդ. 1111 «Հայ լուսաւորչական եկեղեցու կրօնական արարողութիւնները (отправление богослужения) և հոգևոր գործերի վարումը (завѣдывание духовными дѣлами) պատկանում է նրա հոգևորականութեան իրաւասութեան, համաձայն այդ եկեղեցու կանօնների և արարողութիւնների (на основаніи законовъ и чиноположенія сей церкви).

Եթէ այդ յօդուածից բաց թողնենք ծիսակատարութեան, կամ կրօնական արարողութիւնների վերաբերեալ կէտերը, որոնք այժմ մեզ չեն հետաքրքրում, և վեր առնենք միմիայն վարչական գործերի վերաբերեալ մասը, այն ժամանակ մենք կը ստանանք հետեւալը. «Հայ լուսաւորչական եկեղեցու բոլոր հոգևոր գործերի վարումը համաձայն նրա կանօնների, պատկանում է նրա հոգևորականութեան իրաւասութեան»:

Որ այս դէպքում «Պօլօժենիէն» ի նկատի ունի մեր եկեղեցու դարաւոր օրէնքներն ու կանօնները, իր ներքին կեանքում մշակուած, դա

անվիճելի է: Այդ հանգամանքը յիշուած է կաթողիկոսական իրաւա-
սութեան վերաբերեալ «Պօլօթենիէի» գրեթէ ամեն մի յօդուածում*):

Այդ բաւական չէ, «Պօլօթենիէն» պարտաւորեցնում է Ամենայն
Հայոց Կաթողիկոսին իր իրաւասութեան վերաբերեալ խնդիրները
լուծելում՝ անպայման ղեկավարուել մեր եկեղեցու այդ դարաւոր կա-
նօններով և օրէնքներով: Այդ ձեռով լրացւում է պետական օրէնքը,
«Պօլօթենիէի» պակասը և չը նախատեսածը: Այս ձեռով մեր եկեղեցու
ներկան կապուած է նրա դարաւոր անցեալի հետ:

Այդ հոգեւոր գործերի վերաբերմամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի
իրաւասութիւնը նախատեսուած է «Պօլօթենիէի» 1117 յօդուածում,
որը ասում է.

«Հայ լուսաւորչական եկեղեցու գլխաւոր վարչութիւնը (Главное уп-
равление Армяно-Григорьянской церковью) և բարձրագոյն հսկողու-
թիւնը հոգեւորականութեան վրայ և հայ եկեղեցու կանօնների և ծիսակա-
տարութեան ճիշդ գործադրութեան վրայ պատկանում է էջմիածնի Պատրի-
արքին, իբրև Ամենայն Հայոց Ծայրագոյն Կաթողիկոսին (какъ верхов-
ному Католикосу народа Гайканскаго).

Եթէ այդ յօդուածից կրկին բայց թողնենք ծիսակատարութեան
վերաբերեալ կէտերը**), այն ժամանակ մենք կը ստանանք հետևեալը.

*) Թուելով Կաթողիկոսի իրաւունքները և արտօնութիւնները, իբրև հիմք
կամ յենակէտ այդ իրաւունքների և արտօնութիւնների՝ «Պօլօթենիէն» շարունակ
կրկնում է. «Собразно съ древними обычаями (յօդ. 1129). „На основаніи
древнихъ законовъ Армяно-Григорьянской церкви“ (յօդ. 1130). „Согласно
древнимъ правиламъ церкви“ (յօդ. 1131). „Руководствуясь древними по-
становленіями церкви“ (յօդ. 1132) և այլն, և այլն:

**) Ի՞՞մ հակախօսներէից մէկը՝ իրաւաբան պ. Գաբրիէլ Ենգիւրեանը, քննե-
լով իմ «Պօլօթենիէն» այս երկու յօդուածների մտկնաբանութեան մեթոդը, հետե-
ւալ—իրա ժարգոնով ասած—իրաւաբանութիւնն է անում:

«Պ. Ենգիւրեանը կամենում է իրաւաբանութիւն անել (?) և բերում է Պօլ-
թենիայի մի քանի յօդուածներ, ուր իհարկէ ոչ մի խօսք չը կայ թեմական խոր-
հուրդների ժողովուրդական քննութիւնների մասին, բայց նա ասում է, որ եթէ
այսինչ յօդուածից հանենք այսինչ խօսքերը, այն ժամանակ Կաթողիկոսը իրա-
ւունք ունի թեմական խորհուրդներ սահմանել:

Օրէնքից հանենք խօսքեր...

Ի՞նչ հանենք, ո՞վ իրաւունք տուց, ո՞ր իրաւաբանական գիտութեան օրէնքի
բացատրութեան այսպիսի հայկական մեթոդ է ընդունուած...

Նոյն խիղճ ոչ իրաւաբան ընթերցողը, կարգաւոր իմ գրած տողերը, կարող է
հասկանալ, որ ես այսպիսի բան չեմ արել, այլ Ք. Ենգիւրեանը բաց է ի բաց
գրաբարութիւն է գրում իմ մասին:

«Հայ լուսաւորչական եկեղեցու վարչութիւնը և բարձրագոյն հսկո-
ղութիւնը (высшій надзоръ) հոգեւորականութեան վրա և նոյն եկեղեցու
կանօնների ճիշդ գործադրութեան վրա (за точнымъ исполненіемъ
правиль сего исповѣданія) պատկանում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին»:
Եւ միմիայն նրան և ուրիշ ոչ ոքի, որովհետեւ այդ իրաւունք-
ները բացի Կաթողիկոսից ոչ ոք չէ կարող գործադրել: Ինքը Կա-
թողիկոսը չէ կարող ուրիշի յանձնել իր այդ իրաւունքները:

Այս վերին աստիճանի կարեւոր հանգամանքը պարզ երևում է
նոյն յօդուածի շարունակութիւնից, թէ Սինօդը այս ամենում միմիայն
օգնական մարմին է հանդիսանում, աջակցում է Կաթողիկոսին («Ему
во всемъ содѣйствуетъ Эчмиадзинскій армяно-григорьянскій
синодъ»).

Սակայն՝ շարունակում է նոյն յօդուածը:

«Ամենայն Հայոց Կաթողիկոսին ոչ մի դէպքում (ни въ какомъ
случаѣ) ոչ ոք չէ կարող փոխարինել: Ոչ Սինօդին, և ոչ էլ որեւէ այլ
հիմնարկութեան, կամ անհատութեան չէ կարելի յանձնել Կաթողիկո-
սական իրաւունքները (власти, правъ преимуществъ, присвоенныхъ
сану Католикоса):»

Այստեղից պարզ է, որ մեր եկեղեցական գործերի վերաբերեալ
որեւէ վարչական կարգադրութիւններ անելու իրաւունքը վերապահուած
է միմիայն Ամենայն Հայոց Կաթողիկոսին, իբրև նոյն վարչութեան

Անա թէ ես ինչ եմ արել:

Ես բերել եմ «Պօլօթենիէի» 1111 և 1117 յօդուածները, որոնք միաժամա-
նակ խօսում են թէ եկեղեցական աղադրութեան և թէ վարչական խնդիրների վե-
րաբերմամբ: Անա այդ յօդուածները:

§ 1111. Отправление богослуженія и завѣдываніе духовными дѣлами
церкви Армяно-Григорьянской принадлежить духовенству
ея на основаніи законовъ и чиноположенія сей церкви.

§ 1117. Главное управление Армяно-Григорьянской церковью и вы-
сшій надзоръ за духовенствомъ ея и за точнымъ исполне-
ніемъ правилъ и обрядовъ сего исповѣданія принадлежить
Эчмиадзинскому Патріарху, какъ Верховному Католикосу
народа Гайканскаго. Ему въ всемъ содѣйствуетъ Эчмиад-
зинскій Армяно-Григорьянскій Синодъ; но Патріархъ ни
въ какомъ случаѣ не можетъ передать ни сему, ниже ка-
кому либо иному мѣсту или лицу, власти, правъ и преи-
муществъ, присвоенныхъ сану его.

Ամեն մի հասարակ գրագէտն անգամ կարող է հասկանալ, որ այս յօդուած-
ները պարունակում են երկու կէտ, մէկը վերաբերում է եկեղեցական աղադրու-
թեան (отправление богослуженія—§ 1111) և ծիսակատարութեան (исполненіе

գլխաւոր և բարձրագոյն ղեկավարին: Առանց նրա կամքի և համաձայնութեան անկարելի է որեւէ այդպիսի վարչական կարգս ղրութիւն անել:

Պարզ է, որ այս դէպքում ոչ մի կերպ անհրաժեշտ, կամ պարտաւորեցուցիչ չէ Կաթողիկոսի համար Սինոդի օգնութիւնը, կամ աջակցութիւնը: Կաթողիկոսը կարող է պահանջել այս հարցում Սինոդի աջակցութիւնը, կամ օգնութիւնը, կարող է և չը պահանջել:

Հասկանալի է, որ եթէ Կաթողիկոսը թեմական ժողովների և խորհուրդների վերաբերմամբ հրահանգական կարգադրութիւններ է արել—մինչև անգամ «անշուշտ առանց էջմիածնի Սինոդի պրօկուրօրի գիտութեան», ինչպէս պնդում է պ. Կատօնը («Հովիտ» № 28), չէ գիտեմ ինչ աղբիւրից քաղած՝ այստեղ ոչ մի ապօրինութիւն չի կայ: Նոյն խոսքով «Պօլօթենիէում» չը կայ ոչ մի յօդուած, որը պահանջէր Կաթողիկոսից, որ սա իր վարչական կարգադրութիւնները պարտ է անել «էջմիածնի Սինոդի ու պրօկուրօրի գիտութեամբ»: Այդ պահանջը նրանից անում են այսօր մեր պահպանողականները, որոնք ցանկանում են այս դէպքում հանդիսանալ plus royaliste, que le roi, կամ

обрядовъ сего исповѣданія—§ 1117), իսկ միւսը վերաբերում է վարչական գործերին (завѣдываніе духовными дѣлами—§ 1111), главное управление Армяно-Григорьянской церковью и высшій надзоръ за духовенствомъ ея и за точнымъ исполненіемъ правилъ сего исповѣданія—§ 1117):

Որովհետեւ իմ խօսքը միմիայն վարչական խնդիրներ վերաբերում է և ամենեւին չէ վերաբերում եկեղեցական տարրօրութիւններին. կամ ծիսակատարութեան խնդիրներին, ուստի այդ յօդուածներից ես քաղել եմ վարչական խնդիրների վերաբերեալ մասերը, բաց թողնելով մնացեալը և ամենեւին չը փութելով յօդուածների բառացի և տրամաբանական իմաստը:

Արդեօք գէթ հեռուոր նմանութիւն կ'այ իմ արածի և իրաւաբան Գ. Ենդիբարեանի ինձ վերագրածի մէջ:

Դարեգին ենդիբարեանը գրեթէ իրաւ ամեն մի յօդուածում կրկնում է կատօնական մի ceterum censeo, թէ

«Ես գրել եմ, որ հայերը հաղաբարտ տարիներ հասարակական գործերում անմիտ են եղել»:

Ըստ երևոյթին հայի հաղաբարտ տարիների այդ ժառանգական յատկութիւնը իր ամենատուր արտայայտութեան համար ընտրել է քաջամարտ հայ իրաւաբան Դարեգին ենդիբարեանին, որովհետեւ վաղուց նրա գրութեանից վաճառած է առողջ դատողութիւնը և մնացել է միայն թունդ... ենդիբարեանութիւնը:

Կարգացէք, օրինակի համար, նրա յօդուածը Պարսկաստանի ոստիկանական շէֆի, Եփրեմի մասին (Եփրեմը խելօք է): Կարգացէք և համբեցէք. թէ քանի տասնեակ անգամ նա իր գրութիւններում քաջութիւն է ունեցել ամենայն հայոց Կաթողիկոսի կարգադրութիւնները և կոնդակները «յիմարական» և այլ այդպիսի մականուններով մեծաբեր... մի բան, որ նա չէր համարձակի մի յետին ոստիկանական պրիստուի վերաբերմամբ իրեն թոյլ տալ...

աւելի ճիշդ համեմատութիւն, plus catholique que le Pape (պապից աւելի կաթօլիկ հանդիսանալ):

Ուստի թող հայ հասարակութիւնը ինքը ըստ արժանոյն գնահատէ, թէ ինչ արժէք ունի այն վայնասունը, որ բարձրացրել են մեր պահպանողականները, թէ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ստիպել, կամ թելադրել են թեմական ժողովների և խորհուրդների մասին ապօրինի կոնդակներ հրատարակելու «առանց էջմիածնի Սինոդի և պրօկուրօրի գիտութեան»: Թէ ըստ Պօլօթենիէյի և թէ մեր եկեղեցական կանօնների համաձայն՝ ամենայն հայոց կաթողիկոսները լիովին իրաւունք ունեն հրահանգական և այլ, ժամանակաւոր, կամ մշտական կարգադրութիւններ անելու մեր եկեղեցու բոլոր գործերի վերաբերմամբ առանց Սինոդի և պրօկուրօրի գիտութեան: Եւ այդ իր կարգադրութիւններին և հրահանգներին ըստ վաղեմի սովորութեան կոնդակի ձև յատկացրած՝ ոչ մի ապօրինութիւն չէ արել այժմեան Կաթողիկոսը:

Տասնեակ տարիների ընթացքում ամենայն հայոց կաթողիկոսները առանց Սինոդին և պրօկուրօրին նախապէս յայտնելու—որ թոյլաւութեան բնաւորութիւն կը ստանալ—քաղած իւր վարչական կարգադրութիւններ են արել, չըջարեալականներ և հրահանգներ են հրատարակել. ոչ կառավարութիւնը և ոչ որ ապօրինի չէ համարել և չէ բողոքել դրանց դէմ:

Ուրեմն ինչո՞վ բացատրել մեր պահպանողականների յարուցած տարօրինակ բողոքը, թէ Կաթողիկոսը «անշուշտ առանց էջմիածնի Սինոդի և պրօկուրօրի գիտութեան» կոնդակ է հրատարակել թեմական ժողովների և խորհուրդների մասին:

Նրանով, որ մեր պահպանողականները տողորուած ժողովրդատեաց զաղափարներով՝ սկզբունքով դէմ են կաթողիկոսական այդ ժողովրդատէր կարգադրութիւններին, որոնք մահացու հարուած են նրանց ամբողջ աշխարհայեցողութեան:

Կրքից կուրացած՝ նրանք պատրաստ են բողոքելու այժմեան կաթողիկոսութեան ամեն մի կարգադրութեան դէմ:

Եթէ նոր կաթողիկոսութեան այդ կարգադրութիւնները ձեւական տեսակէտից կանօնաւոր են, դա խնդրի միայն մի կողմն է: Օրինականութեան տեսակէտից հարկաւոր է, որ այդ կարգադրութիւնները կանօնաւոր լինեն և ըստ բովանդակութեան, այսինքն նրանք չը հակասեն ոչ պետական տիրող օրէնքներին և ոչ էլ մեր եկեղեցական դարաւոր օրէնքներին և կանօններին:

Ամենայն հայոց Կաթողիկոսի վարչական կարգադրութիւնները

պիտի բղխած լինեն թէ տիրող օրէնքներէց և թէ նուիրուած լինեն այդ օրէնքների իմաստի մեկնաբանութեան և գործադրութեան ծաւալին: Այժմս քննենք, թէ այս տեսակէտից գոհացուցիչ են կաթուղիկոսական կարգադրութիւնները թեմական ժողովների և խորհուրդների մասին:

ԹԵԱՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ՆԻ 1836 Թ.
«ՊՕԼՕԺՆԻԷՆ»

VI

Ես արդէն մասնացոյց էի արել, որ 1836 թուի «Պօլօժնիէն» շատ կէտերում պարտաւորեցնում է Ամենայն Հայոց Կաթուղիկոսին ղեկավարուել մեր եկեղեցու հնաւանդ կանօններով և օրէնքներով:

Յայտնի բան է, այդ օրէնքներն ու կանօնները միմիայն այն ժամանակ պէտք է գործադրել, երբ նրանք բացէ ի բաց չեն հակասում տիրող պետական օրէնքներին, այլ լրացնում են այդ օրէնքների պակասը, կամ մեկնաբանում են նրանց այս կամ այն կէտերը, որոնք պարզ, կամ լրիւ չեն:

Հասկանալի է, որ եթէ այս կամ այն խնդրի վերաբերմամբ գոյութիւն ունի պետական օրէնք, ամենից առաջ պէտք է ղեկավարուել այդ օրէնքով:

Թեմական առաջնորդներին նուիրուած է «Պօլօժնիէն» չորրորդ բաժանմունքը, որի 1169 յօդուածը ասում է,

«Հայ լուսաւորչական եկեղեցու թեմական առաջնորդները նշանակուած են Թագաւոր Կայսրից այդ դաւանութեան բարձրաստիճան հոգեւորականներից (изъ духовныхъ сановниковъ сего исповѣданія):»

Անկասկած՝ այս է թեմական առաջնորդների ընտրութեան վերաբերեալ տիրող օրէնքը: Ոչ մարմնաւոր կառավարութիւնը տրամադիր է հրաժարուելու այս կանօնից, ոչ էլ մեր եկեղեցու պետի կողմից այժմս որեւէ նկրտում կայ այս օրէնքը փոփոխելու, ինչքան էլ նա համապատասխան չը լինի մեր եկեղեցու գարաւոր ընտրական սկզբունքին:

Սակայն այդ յօդուածը չէ ամփոփում մեզ հետաքրքրող խնդրի ամբողջ էութիւնը: Ոչ այս յօդուածում, ոչ այլուր «Պօլօժնիէնում» չէ

ցիշուած, թէ Ամենայն Հայոց Կաթուղիկոսին է վերապահուած Թեկնածուների տաջարկելու իրաւունքը, մինչդեռ դա անվիճելի է. 1836 թուականից սկսած՝ չէ պատահել և ոչ մի դէպք, երբ Թագաւոր Կայսրը նշանակած լինի թեմական առաջնորդ առանց Ամենայն Հայոց Կաթուղիկոսի առաջարկութեան: Եւ դա շատ հասկանալի է, երբ Ամենայն Հայոց Կաթուղիկոսը պետական օրէնքից ճանաչուած է իբրեւ եկեղեցու պետ և ամբողջ հոգեւորականութեան վրա բարձրագոյն վերահսկող: Այստեղ մենք գործ ունենք օրէնքի լոկ պատահական թերութեան հետ, որը լրացնում է օրէնսդիրը նոյն «Պօլօժնիէն» այլ տեղում: 1140 յօդուածի զօրութեամբ Ամենայն Հայոց Կաթուղիկոսը իրաւունք ունի երկու թեկնածուներ առաջարկելու Սինօդի անդամութեան, որոնցից մէկին Թագաւոր Կայսրը հաստատում է Սինօդի անդամ: Անշուշտ այս յօդուածի զօրութեամբ և անալօգիայով սրբազորուած և հաստատուած է այն պրակտիկան, որ թեմական առաջնորդութեան համար ևս Կաթուղիկոսը առաջարկում է երկու թեկնածուներ, որոնցից մէկին Թագաւոր Կայսրը նշանակում է թեմական առաջնորդ:

Նոյնպէս հաստատուած և անվիճելի է Ամենայն Հայոց Կաթուղիկոսի իրաւունքը՝ թէ Սինօդի անդամների և թէ թեմական առաջնորդների արձակման վերաբերմամբ, որպիսի արձակում լինում է Կայսերական հրամանով համաձայն Ամենայն Հայոց Կաթուղիկոսի առաջարկութեան: Սակայն այս ամենակարեւոր կէտերի մասին ևս «Պօլօժնիէն» լուրջիւն է պահպանում:

Ահա այս է տրամաբանում տիրող օրէնքը թեմական առաջնորդների նշանակման և արձակման վերաբերմամբ: Ամենայն Հայոց Կաթուղիկոսը երկու թեկնածու է առաջարկում, որոնցից մէկին Թագաւոր Կայսրը նշանակում է նոր թեմական առաջնորդ և Կաթուղիկոսի առաջարկութեան համաձայն հրաժարեցնում նախկին առաջնորդին: Որ ինքը կառավարութիւնը ևս այդպէս է ըմբռնում օրէնքի իմաստը թեկնածուների վերաբերմամբ, դա հաստատուած է ներսով, որ այն ժամանակուայ ներքին գործոց մինիստր կոմս Բլուդովը հաղորդում է Կովկասի գլխաւոր կառավարչապետ Բարոն Բողէնին (21-ն յունուարի 1842 թ.), որ «Պատրիարք կաթուղիկոսի պարտականութեանն է վերապահուած Բարձրագոյն հաստատութեան ներկայացնել երկու թեկնածու թեմական առաջնորդի պաշտօնի համար»:

Արդեօք որեւէ կէտ այս օրէնքներից փոխուած, կամ խախտուած է Ամենայն Հայոց Կաթուղիկոսի «Ժամանակաւոր Հրահանգով», կամ կօնդակնելով, կամ մի այլ կարգադրութեամբ:

Ամենակին ոչ. Կաթուղիկոսի հրահանգը, կամ այլ կարգադրու-

թիւնները բոլորովին չեն վերաբերում այս օրէնքներին, որոնք անսասան են մնում: Նրա կարգադրութիւնները վերաբերում են այն նախնական մօմենտներին, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ինքը թեկնածու է որոնում ու ընտրում և վճռում է ներկայացնել Կայսրի հաստատութեան:

Այդպէս էլ բացատրուած է Խրիմեան Կաթողիկոսի 1906 թուի մայիսի 10 կոնդակում: «Հայաստանեայց Առաքելական եկեղեցու դարերով սրբազործուած իրաւունքը—ասում է այդ կոնդակում—քեզ ենք վերագրւածում, ժողովուրդ Հայոց... հոգեւոր վարչական պաշտօնեաների (թեմական առաջնորդների, յաջորդների) ընտրութիւնը, որից յետոյ ընտրեալները կը հրաւիրուեն իրենց պաշտօնին պետութեան կողմից հաստատուած օրինական ճանապարհով, որը նախատեսուած է «Պօլօթենիէում»: Այստեղից պարզ է, որ կաթողիկոսական վերոյիշեալ կարգադրութիւնները նախորդում են «պետութեան կողմից սահմանուած օրինական ճանապարհին», ուրեմն լրացնում են այն, ինչ որ անպայման վերապահուած է կաթողիկոսական իրաւասութեան համաձայն «Հայաստանեայց Առաքելական եկեղեցու դարերով սրբազործուած օրէնսդրութեան»:

Այդ սկզբնական կարգադրութիւններում Ամենայն Հայոց Կաթողիկոսը լիովին ազատ է թեկնածուներ ընտրելու համար սահմանել այն ձևը, որը նա համապատասխան է համարում մեր եկեղեցու դարաւոր կանօններին և նպատակադրմամբ ժողովրդի շահերի տեսակէտից, այսինքն ընտրական թեկնածութիւն սահմանելը փոխանակ նախկին նշանակովի թեկնածութեան:

Նորընտիր Կաթողիկոսը այդ փոփոխութիւնը հաստատելով, կամ սրբազործելով մեղանշած կը լինէր միմիայն այն դէպքում, երբ ապացուցուէր, թէ ընտրովի առաջնորդութիւնը թէ հակառակ է մեր եկեղեցու դարաւոր կանօններին և սովորութիւններին և թէ ինքն ըստ ինքեան վնասակար է մեր հասարակական շահերի տեսակէտից: Անվիճելի է մի կէտ, որ նա չէ հակասում պետական օրէնքին:

Այժմ կաթողիկոսութեան սկզբունքային հակառակորդները չեն համարձակուի պնդելու, որ ընտրովի առաջնորդը, կամ յաջորդը անժանօթ է հայոց եկեղեցուն, հակառակ է նրա ոգուն և հնաւանդ սկզբունքներին և վնասակար հասարակական շահերի տեսակէտից: Ո՛չ, նրանք լաւ գիտեն, որ հայոց եկեղեցական իրաւագիտութիւնը չէ ընդունում նոյնիսկ եպիսկոպոս առանց ընտրութեան և առանց թեմի. նրանք շատ լաւ գիտեն, որ Թիւրքիայում, անգամ Արգիւլ Համիդի օրով, բոլոր թեմական առաջնորդները ընտրովի են եղել:

Նրանք չեն համարձակուի պնդելու, թէ ընտրովի առաջնորդը աւելի վատ է, քան նշանակովին:

Նրանց բոլոր յենակէտը 1836-ի «Պօլօթենիէն» է, նրա տառը և նրա ամենապակասաւոր յատկութիւնները, որոնց երբէք չեն համակերպուել մեր կաթողիկոսները:

Սակայն ընդունելով 1169 յօդուածի իմաստը, ես պնդում եմ, որ ոչ մի տեղ ամբողջ «Պօլօթենիէում» արգելք չէ դրուած Ամենայն Հայոց Կաթողիկոսին հարցնել արդէն գոյութիւն ունեցող այն ընտրական մարմիններին, որոնք կարող են իրանց ընտրական ձայնով Կաթողիկոսին մատնացոյց անելու այս կամ այն թեկնածուին, երբ Կաթողիկոսը այս խնդրում ցանկանում է իր հոտի ձայնը լսել և նրա հետ ձեռն ի ձեռն գործել:

Աւելին կասեմ. «Ժամանակաւոր հրահանգի» համաձայն՝ թեմական առաջնորդի ընտրութիւնը շատ սահմանափակուած է Կաթողիկոսի կամքով. նրա 22-դ յօդուածում բաց է ի բաց ասուած է, որ թեմական ժողովը ընտրում է Կաթողիկոսից նախապէս հաստատուած ցանկից երկուսին իբրեւ թեկնածու («երկու թեկնածուների ընտրութիւն է անում»), որոնց ներկայացնում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին «օրինական ընթացք տալու», այսինքն գործադրելու տիրող օրէնքը ըստ «Պօլօթենիէի»: Պարզ է, որ թեմական ժողովը կաթողիկոսական ցանկից ընտրութիւն անելով՝ ուրեմն ոչնչով չը հակասելով նրա կամքին և չը սահմանափակելով կաթողիկոսական իրաւունքները, օգնում է Կաթողիկոսին ընտրութեան այն ֆազիսում, երբ նախկին կաթողիկոսները չէին ցանկանում լսել ժողովրդի կարծիքը, իսկ այժմեան կաթողիկոսը կամենում է ղեկավարուել այստեղ ժողովրդի ձայնով:

Ի՛նչ փոփոխութիւն է սահմանում այդ նոր ձևով: Միակ փոփոխութիւնը այն է, որ նախկին կաթողիկոսները թեկնածուներ որոշելու և ընտրելու ժամանակ խոհրդակցում էին իրանց մերձաւորների և ֆաթրիտների հետ, կամ չընթացաւոր անձնաւորութիւնների հետ, որոնք այսպէս թէ այնպէս Կաթողիկոսին իրանց ձեռքն առած, պղտոր ջրում լաւ որս էին բռնում: Գէորգ կաթողիկոսի օրով այդ դերը ամբողջապէս իւրացրել էր Մանկունին և Կաթողիկոսին իր ձեռքում ժողոված՝ սակաբին—մաղանդաւ էր նշանակել այլ և այլ պաշտօնների համար: Սա հօ հանրածանօթ փաստ է: Անպատկառութիւնը հասել էր այն աստիճանի, որ չը նայած ամբողջ հասարակութեան և նրա կարծիքի, մամուլի բողոքին և յուզմունքին՝ սակաբինը հետզհետէ բարձրանում էր և մի անհատ, մի պատահական parvenu թքում էր ամբողջ ազգի բողոքի վրա և խաղում նրա ճակատագրի հետ...

Մակար կաթուղիկոսի օրով այդ դերը կատարում էին Պ. Սիմէօնեանցը, Կ. Կոստանեանը և Ն. Նահապետեանը, իսկ Խրիմեանի օրով՝ նոյն դերը կատարում էր Խորէն Էֆէնդին:

Հարկումը է արդեօք թուել, թէ մըքան անարժան, ապրկար, տղէտ, կաշառակեր ու թեմական արդիւնքները «իւրացնող ու վերցնող» առաջնորդներ ենք ունեցել: Հարկաւոր է ասել, թէ որքան ազգը տուժել է այդ երևոյթից:

Այժմեան Կաթուղիկոսը ցանկանում է վերջ դնել այդ չարիքին: Նա ցանկանում է որ ժողովրդի ձայնով թեմական առաջնորդ ընտրուի: Եթէ թեմական ժողովը վատ առաջնորդ ընտրեց, այլ ևս ոչ ոքի վրա չէ կարելի մեղադրանք բառնալ: Սակայն Կաթուղիկոսը ժողովրդի կամքին ևս սահման է դնում, որ նա խուժանական բնաւորութիւն չը կրէ: Թեմական ժողովը միմիայն Կաթուղիկոսի հաստատած ցանկից պարտաւոր է ընտրութիւն անել: Ընդարձակելով այսօր մեր եկեղեցու դարաւոր ընտրական սկզբունքը թեմական առաջնորդների և յաջորդների վերաբերմամբ, Ամենայն Հայոց Կաթուղիկոսը միայն վերականգնեցնում է եկեղեցական հնաւանդ օրէնքը և այն էլ այնպիսի ձևով, որ ոչ մի կողմով չէ մեղանշում պետական օրէնքի դէմ, չէ խախտում «Պօլօժենիէի» և ոչ մի յօդուածը:

Համոզուած եմ, որ այս հարցում հայ ազգը, բացի խաւարամտական ոհմակից, ամբողջովին կողմնակից և համակարծիք է իր պետին:

Ինչ վերաբերում է յաջորդների ընտրութեան, այստեղ կառավարութիւնը լիովին ազատութիւն է տալիս և ինքը ամենևին չէ միջամտում: «Պօլօժենիէի» 1190-դ յօդ. դօրութեամբ «յաջորդները նշանակում են թեմական առաջնորդից», ինչպէս և 1204-դ յօդ. դօրութեամբ նոյն առաջնորդներից նշանակում են յահաւանի «համաձայն նոյն եկեղեցու հնաւանդ կանոնադրութիւններին» (на основании древнихъ установлений Армянно-Григорьянскоіі церкви): Այս հիման վրա էլ մեր քահանաները ընտրովի են, թէպէտ «Պօլօժենիէն» այդ մասին ևս լռութիւն է պահում, պահանջելով թեմական առաջնորդից, որ նա պահպանէ եկեղեցու հնաւանդ կանոնը. իսկ այդ հնաւանդ կանոնը, ինչպէս մենք գիտենք ամենքս, ընտրողական ձևն է: Քահանային ընտրում է ծուխը և հաստատում է թեմական առաջնորդը:

ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԻՐԱՒԱՍՈՒԹԻՒՆԸ

VII

Այժմեան կաթուղիկոսութեան հակառակորդները ամենից շատ բողոքում են թեմական ժողովների և նրանցից ընտրուած թեմական խորհուրդների դէմ: Եւ այդ շատ հասկանալի է:

Ծխական ամբողջ գոյքը վաղուց դուրս է եկել միահեծանութեան ճիրաններից և յանձնուած է ծխական ժողովների և ծխական հոգաբարձութիւնների տնօրինութեան: Այդ հիմնարկութիւնները վաղուց գոյութիւն ունեն մեզանում: «Պօլօժենիէն» 75 տարուայ ընթացքում չը կարողացաւ ոչնչացնել մեր ծխական ինքնավարական կեանքը, որը նոր ոյժ ստացաւ Փոխաբքայի 1905 թուի «Ժամանակաւոր կանոնների» զօրութեամբ, իբրեւ բուն ժողովրդական կազմակերպութիւն: Ոչ մի հոգեւորական ծխական արդիւնքներից գրօշ անգամ կորդելու հնաւարտութիւն չունի:

Այստեղ տէրը—հայ ժողովուրդը յանձին իր ներկայացուցիչներին՝ ծխական հոգաբարձութեան— զխին կանգնած է: Հոգեւորականութեան դերը այստեղ այլ է. չնորհիւ մեր ծխական համայնքի ժողովրդական կազմակերպութեան՝ ամեն մի հոգեւորական պաշտօնեայ լիովին հնաւարտութիւն ունի հսկելու, որ ծխական արդիւնքները ծառայեն իրանց նպատակին, չը վատնուեն և չ'անհետանան:

Կրկնում եմ, այստեղ խաւարամիտների և նրանց բազմախորժակ արբանեակների առջև գծադրուած են Դանտէի դժոխքի ճակատին արձանադրուած խօսքերը՝ lasciare ogni speranza—ձեր որեւէ յոյսը կտրեցէք: Այդ նրանք լաւ գիտեն: Ուստի նրանց բոլոր յոյսը և տենչը այսօր կենտրոնացած է թեմական գոյքի վրայ. այստեղից նրանք միշտ առատ հուճ են քաղել և այս աղբիւրը չեն ցանկանում ձեռքից բաց թողնել: Ահա ինչու նրանք ամենայն օր աղաղակում են, թէ «Պօլօժենիէում» թեմական ժողով չը կայ, դա ապօրինի է, դադարեցրէք նրան...

Նրանք շատ լաւ գիտեն, որ թեմական ժողովները և խորհուրդները ուշ թէ շուտ հաշիւ ու համար կը մտցնեն թեմական և վանքական գոյքերի կառավարութեան մէջ և վերջ կը դնեն մինչև այսօր տիրող միահեծանական յափշտակութիւնների:

Թէ ինչ աստիճանի կորստեան են մատնուած մեր թեմական արդիւնքները, ես չտատնում եմ մի շօշափելի նորագոյն ապացոյցով:

Յայտնի է, որ Թիֆլիսի լայնատարած թեմը ամփոփում է գրեթե կէս Անդրկովկասը, Թիֆլիսի և Քութայիսի նահանգները, Սուխումի, նորանուստ Բաթումի և Արդուինի շրջանները և Գանձակի ու Ղաղախի գաւառները:

Եւ ահա այդ ընդարձակ թեմի առաջնորդը թեմական հարուստ միջոցներից եւ ոչ մի կօպէկ չը դատու յատկացնելու թեմական տեսչի ռոճիկին: Ուստի մինչև այսօր էլ Թիֆլիսի ամենակարեւոր թեմը չունի թեմական տեսուչ ամբողջ դպրոցական գործը կարգի բերելու համար: Եւ այսօր թեմ. տեսչի գործը ամենայն անձնուիրութեամբ և ձրի կատարում է ընտրուի թեմական խորհուրդը, խաւարամիտներին այնքան ատելի ժողովրդի ընտրածները:

Մինչդեռ՝ առաջ թեմական տեսուչների ռոճիկը ամբողջապէս թեմական դանձարանից էր դուրս գալիս և պ. Ղ. Աղայեանի վկայութեամբ՝ ամենայն ճշտութեամբ իր ժամանակին վճարում էր: Ի՞նչ պատահեց, որ առաջ կար այդ ստակը, իսկ այժմ չը կայ... Պէտք է յոյս տածել, որ չուտով կարգի բերուեն Թիֆլիսի հարուստ թեմի եկամուտները և այն ժամանակ հասարակութիւնը կը տեսնի, թէ ո՞ւր են գնում մինչև այսօր մեր թեմի արդիւնքները, որոնցով կարելի կը լինի պահել մի քանի թեմական տեսուչ և մի քանի կենտրոնական երկդասեան ծխական դպրոց:

Բարեբաղբար մեր խաւարամիտները թեմական ժողովների վերաբերմամբ ամենից քիչ օրինական յենակէտ ունեն իրանց բողոքի համար: Թեմական ժողովների արդի կազմակերպութիւնը սահմանուած է Փոխարքայի ժամանակաւոր կանօններով, որոնք, — յոյս ունեմ՝ ոչ ոք չի ժխտի — արդող օրէնքի ոյժ ունեն այսօր:

Թեմական ժողովները յօրինուած են ոչ միայն ի լրումն «Պօլօ-ժենիէի» 1206 յօդուածի, որ յիշուած է Փոխարքայի «Ժամանակաւոր կանօնների» երկրորդ մասի առաջին յօդուածում, այլ և նոյն «Պօլօ-ժենիէի» 1209-րդ յօդուածի իմաստի մեկնաբանութեամբ: Փոխարքայի «Ժամ. կանօնների» § 2-ում կարգում ենք. «Թեմական դպրոցի հոգաբարձական խորհրդի անդամներ ընտրելու համար կազմուած է թեմական առաջնորդի նախագահութեամբ թեմական պատգամաւորների ժողով (созывается подъ председательствомъ епархіальнаго начальника соборіе выборщиковъ епархіи)»:

Նոյն «Ժամ. կանօնների» 5-դ կէտը ասում է, որ «թեմական պատգամաւորների ժողովը 4 տարուայ ժամանակով ընտրում է վերաստուգիչ մասնաժողով»: Թէպէտ Փոխարքայի «Ժամ. կանօններում» չէ ասուած, թէ այդ ժողովները կամ մասնաժողովները կը և տարին

քանի անգամ են ժողովուում, սակայն՝ որ այդ ժողովները պարբերական են, դա պարզ երևում է 4-րդ յօդուածից, որի հիման վրայ «Թեմական հոգաբարձութեան անդամների կէսը փոխուում է երկու տարին մի անգամ» (половина состава выбывается черезъ два года): Հասկանալի է, որ դուրս եկած հոգաբարձութեան խորհրդի անդամների տեղ նոր անդամներ ընտրում է նոյն թեմական պատգամաւորական ժողովը, որպիսի ընտրութիւն կատարելու համար նա պիտի պարբերաբար ժողովուի:

Ուրեմն՝ թեմական պատգամաւորական ժողովները, նրանց պարբերական նիստերը միանգամայն օրինական են և արդող օրէնքներով, այն է՝ 1905 թուի Փոխարքայի «Ժամանակաւոր կանօններով» որոշուած: Նոյն օրէնքներով սահմանուած է և պատգամաւորական ժողովի կազմը (§ 2) և որոշուած նրա ֆունկցիաները:

Ըստ երեւոյթին՝ թեմական ժողովներին յատկացուած պիտի լինի միակ ընտրական ֆունկցիա, այն է՝ ընտրել թեմական դպրոցի հոգաբարձութիւն և վերաստուգիչ յանձնաժողովի անդամներ:

Սակայն՝ այստեղ անմիջապէս մի հարց է ծագում, թէ կարո՞ղ է, կամ պարտաւոր է թեմական պատգամաւորական ժողովը քննել թեմական հոգաբարձութեան գործունէութիւնը թէ ըստ տնտեսականի և թէ ըստ դպրոցականի, նախ քան նոր ընտրութիւն կատարելը: Եւ ինչո՞ւ համար է ընտրուում վերաստուգիչ մասնաժողովը:

Պարզ է, որ օրէնսդիրը այնպէս է մտածում, թէ պէտք է նախ՝ քննել հոգաբարձական գործունէութիւնը, նրա հաշիւները և այլն, և յետոյ նոր ընտրութիւններ կատարել: Հակառակ դէպքում թեմական ժողովը անկարող կը լինի խղճի մտօք իրագործել օրէնքով ստանձնած իր պարտաւորութիւնը, ընտրութիւն կատարելը:

Այս օրինական հիման վրայ 1910 թ. կաթողիկոսական «Ժամանակաւոր հրահանգը» յանձնարարում է թեմական ժողովներին՝ նախ քննել իրանց ստորադրեալ մարմինների գործունէութիւնը («հաշիւները, տեղեկագրերն ու զեկուցումները», ասուած է § 21, գ. կէտում) և ապա՝ համաձայն գործերի պարզուած զրութեան՝ նոր ընտրութիւն են կատարում:

Այսպիսով ուրեմն՝ միանգամայն օրինական հիմունքներով ընդարձակում են թեմական ժողովների ֆունկցիաները. նրանք քննում և հաստատում են թեմական հոգաբարձութեան գործունէութիւնը ըստ դպրոցականի. նրանք քննում են վերաստուգիչ մասնաժողովի զեկուցմամբ և հաստատում հոգաբարձութեան հաշիւները, նրա գործունէութեան տնտեսական մասը:

Այժմ տեսնենք, թե ինչ է պարունակում այդ տնտեսական մասը: «Ժամանակաւոր կանօններ» § 1-ում կարդում ենք. «Թեմական դպրոցի գոյքը կառավարում է 12 անդամներից բաղկացած հոգաբարձական խորհուրդը թեմական առաջնորդի նախագահութեամբ»:

Այստեղից պարզ է, որ թեմական դպրոցները ունեն իրանց առանձին գոյք: Բացի այդ, մեր թեմական դպրոցները ունեն արդիւնքի և մի այլ աղբիւր, որը նախատեսուած է «Պօլօժենիէի» 1209-րդ յօդուածում և մինչև այսօր մեռեալ տառ է մնացել — չէ գործադրուում:

«Թեմի բոլոր եկեղեցիներում և վանքերում երեք ամիսը մի անգամ սովորական ձևով տուրք է հաւաքուում յօգուտ թեմական դպրանոցի և կօնսիստօրիայի միջոցով յանձնուում ըստ պատկանելոյն»:

«Բացի այդ — ստուած է «Պօլօժենիէի» նոյն 1209-րդ յօդուածում — «բոլոր վանքերը նախանձախնդիր լինելով հայոց եկեղեցու շահերին, տարէց-տարի իրանց արդիւնքներից առանձին գումարներ են յատկացնում իրանց թեմական դպրոցի պահպանութեան համար»:

Ուրեմն՝ թեմական ժողովները և նրանց ստորադրեալ մարմինները պարտաւոր են օրէնքով դրադուել իրանց եկամտաւոր և այս աղբիւրներով և մանաւանդ՝ մեր վանքերի եկամուտներով, որոնց վրայ «Պօլօժենիէին» կրկնակի պարտաւորութիւն է դնում նիւթապէս օգնելու թեմական դպրոցին:

Մենք հօ գիտենք, որ մեր թեմի վանքերը մինչև այսօր էլ ոչ մի կօպէկ իրանց արդիւնքից չեն տուել ներսիսեան դպրոցին:

Անշուշտ «Պօլօժենիէի» այս յօդուածը իրագործելու պատճառով՝ Փոխարքայի «Ժամանակաւոր կանօններում» ներմուծուած է մի նոր կէտ: Թէպէտ մեր վանքապատկան կալուածների կառավարութիւնը մնում է հին ձևով, այսինքն վանքական վարչութեան ձեռքը («Պօլօժենիէի» յօդ. 1234 և 1235), սակայն «Ժամանակաւոր կանօնները» աւելացնում են մի նոր յօդուած, որ չը կայ «Պօլօժենիէում»:

Վանքապատկան գոյքերի կանօնաւոր կառավարութեան վրայ հսկելը (для наблюдёнія за правильнымъ веденіемъ управленія имуществами, принадлежащими монастырямъ) թեմական առաջնորդները կարող են յանձնարարել և աշխարհական անձանց (могутъ быть привлекаемы епархіальными начальниками и лица свѣтскія): Անշուշտ այդ յօդուածի հիման վրա Ամենայն Հայոց Կաթօլիկոսը հրամանագրել է բոլոր թեմական առաջնորդներին, որ թեմական ժողովները հսկեն վանքապատկան կալուածների կանօնաւոր կառավարութեան վրայ, կարգի բերեն վանքական արդիւնքները:

1910 թուի «Ժամանակաւոր հրահանգ թեմական ժողովի» 21-րդ

յօդուածի երկրորդ կէտի համաձայն յանձնարարուում է թեմական ժողովներին մշակել «Թեմի մէջ գտնուած վանքերի կալուածների շահագործման եղանակը (նախագծեր)», որը հանդերձ յատուկ տեղեկագրով ձեւերկայացուում է Ամենայն Հայոց Կաթօլիկոսին ի տնօրինութիւն»:

Ահա այն կազմակերպութիւնը, պետական օրէնքով սրբագործուած, որով ղեկավարուում են թեմական ժողովները:

Այստեղ ամենախիստ և բծախնդիր քննութիւնն անգամ չէ կարող գտնել թեմական ժողովների գոյութեան դէմ և ոչ մի օրինական կէտ:*

Ես չեմ տեսնում ապօրինութիւն և այն դէպքում, երբ Ամենայն Հայոց Կաթօլիկոսը յանձնարարուում է թեմական ժողովներին և նրանց ստորադրեալ մարմիններին հաշիւ ու համար պահել և հսկել վանքական կալուածների և արդիւնքների վրայ: Համաձայն Փոխարքայի «Ժամ. կանօնների» վերոյիշեալ կէտի՝ թեմում թեմական առաջնորդի, իսկ բոլոր թեմերում Ամենայն Հայոց Կաթօլիկոսի կարգադրութեամբ աշխարհական անձինք վանքական վարչութեան հետ միասին կառավարում են վանքական կալուածները և նրանց արդիւնքի աւելին նուիրում թէ թեմական դպրոցի պաշտպանութեան և թէ այլ հանրօգուտ նպատակների. իսկ թէ ովքեր են այդ աշխարհական անձինք, դրանց ընտրութիւնը և կազմակերպութիւնը ամբողջապէս յատկացրած է մեր հոգեւոր կառավարութեան տնօրինութեան, քանի որ դրանց մասին «Ժամանակաւոր կանօնները» և առհասարակ պետական օրէնքները լռութիւն են պահում:

Եւ եթէ այս իրաւունքը իրագործելու համար մեր հոգեւոր կառավարութիւնը պատեհ է համարում այս ֆունկցիան յանձնել ընտրովի անձանց, կամ ընտրովի մարմինների մեր եկեղեցական հնաւանդ կանօնների համաձայն, այստեղ ոչ մի օրէնքի հակառակ կէտ ես չեմ տեսնում:

*) Օրինականութեան տեսակէտից ինձ միանգամայն սխալ է թւում «Ժամանակաւոր հրահանգի» 21 յօդ. ե) կէտի այն մասը, որով թեմական ժողովներին յատկացուում է մի տեսակ դատաւորի դեր նոյն իսկ թեմական առաջնորդի գլխին: Թեմական ժողովները ոչ իրաւունք և ոչ էլ պատշաճաւոր ձեռնհասութիւն ունեն սյոպլիսի պաշտօնի համար: Այդ կէտը իբրեւ օրէնքին հակասող՝ պէտք է դուրս հանել հրահանգից:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՐԱՆՑ
ԻՐԱԽԱՍՈՒԹԻՒՆԸ

VIII

Թեմական խորհուրդների մասին չէ յիշուած ոչ «Պօլօթենիէում»
և ոչ էլ Փոխարքայի «Ժամանակաւոր կանօններում»:

Ինչպէս և երբ ծագեց Թեմական խորհուրդներ սահմանելու
գաղափարը:

Ես արդէն վերեր նկատել էի, որ Թեմական ժողովների կազմա-
կերպութիւնը և գործունէութիւնը սկսուեց Խրիմեան Կաթողիկոսի
օրով:

Առաջին իսկ Թեմական ժողովներում ղեկացուեց մի պակաս, մի
մնայուն գործադրական մարմին հիմնելու կարեւորութիւն, որը մէկ
կողմից նիւթեր նախապատրաստէր Թեմական ժողովների պարապ-
մունքների համար, իսկ միւս կողմից ի կիր առնէր Թեմական ժողով-
ների վճիռները և կարգադրութիւնները:

Եթէ Թեմական ղարանոցի վերաբերմամբ այդպիսի գործադրա-
կան մարմին է հանդիսանում Թեմական ղարանոցի հոգաբարձութիւնը,
մնացեալ խնդիրների վերաբերմամբ միանգամայն բացակայում է այդ-
պիսի մի վարչական մարմին, ընտրական՝ ինչպէս և Թեմական հոգա-
բարձութիւնը: 2է կարելի մօռանալ, որ Թեմական ժողովները,
ամենասերտ կապ ունենալով ծխական ժողովների հետ—իրեն նրանցից
անմիջապէս ընտրուած—ինքն ըստ ինքեան մի ամբողջացուցիչ մար-
մին են հանդիսանում Թեմի բոլոր ծխական հիմնարկութեանց, որոնց
մէջ ղարանոցականը գերակշռող տեղ է բռնում: Այդ իսկ պատճառով
Թեմական ժողովները իրանց ուշադրութիւնը կենտրոնացրին նաև
նորաբաց ծխական ղարանոցների վրայ, որոնք մի անկերպարան քաօս
էին ներկայացնում, առանց հաստատուած ծրագրի, առանց ղեկավա-
րողի:

Այստեղից միանգամայն ինքնաբերաբար ծագում է ղարանոցական
Թեմական խորհուրդ կազմելու գաղափար: Թիֆլիսի Թեմում այդպիսի
խորհուրդ կազմելու համար միաք յղացել է 1908 թուի հոկտեմբերի
10-ի Թեմական ժողովում: Այդ ժողովը կարեւոր է համարել «հիմնել
Թեմական ղարանոցական խորհուրդ Թեմի ղարանոցական գործը ղեկավա-
րելու Սրբազան առաջնորդի հետ միասին»:

Անշուշտ Թեմական խորհուրդի իմաստը նոյնը պէտք է լինի ինչ

որ է բոլոր վարչութիւններին կից խորհուրդների իմաստը, այն է՝ մի
կօլեկիալ խորհրդակցական մարմին կազմել, որի վճիռները վաւերացրած
նրա նախագահից, Թեմական առաջնորդից, անմիջապէս գործադրու-
թեան են առնում: Այդպիսի մի կօլեկիալ և ընտրովի Թեմական
խորհուրդի անհրաժեշտութիւնը մանաւանդ զգալի էր Թեմական տե-
սուչների բացակայութեան պատճառով: Ի դէպ է այստեղ նկատել,
որ Թեմական տեսուչների մասին ես ամենեին չեմ յիշում ոչ «Պօլօ-
թենիէն», ոչ 1874 թուականի Բարձրագոյն կանօնները և ոչ էլ 1905
Թուի Փոխարքայի «Ժամանակաւոր կանօնները»: Մինչդեռ Թեմական
տեսուչները տասնեակ տարիներ գոյութիւն են ունեցել կաթողիկոսա-
կան կարգադրութեամբ և կառավարութիւնը ապօրինի չէ համարել
նրանց:

Մատթէոս II Կաթողիկոսը էջմիածին ժամանելուց անմիջապէս
յետոյ յանձնարարում է Տեղակալին ընդհանուր հրահանգով բարեկարգել
նորաբաց ծխական ղարանոցները համաձայն տիրող օրէնքների և կա-
նօնների պահանջներին:

Ահա այդ հրահանգում, որքան ինձ յայտնի է, առաջին անգամ
պաշտօնապէս յիշում է Թեմական խորհուրդների մասին: Առաջ ենք
բերում հրահանգի այդ կտորը ամբողջապէս: «Թեմի բոլոր ծխական
և վանքական ղարանոցների կանօնաւորութեան և բարգաւաճման վրայ
հոգ է տանում և հսկում է Թեմական իշխանութիւնը թէ վարչական,
թէ ուսումնական և թէ տնտեսական կողմից: Առաջնորդը Թեմի ծխա-
կան և վանքական ղարանոցների գործերը ղեկավարում է իբրև նախա-
գահ Թեմական խորհուրդի, որի անդամները թուով 4—6 հոգի ընտրում
են Թեմական պատգամաւորական ժողովի կողմից և հաստատում են
Վեհափառ Կաթողիկոսից Տէր Փոխարքայի կանօնների բ. մասի իմաստին,
կամ ողոյն համաձայն»:

Անուհետև Թեմական խորհուրդներին յատկացուած է հետեւալ
իրաւասութիւնը.

«Թեմական խորհուրդը հաստատում է ծխական հոգաբարձու-
ներին, ծխական ղարանոցների տեսուչներին և կամ աւագ ուսուցիչնե-
րին, քննում է և հաստատում ծխական հոգաբարձուների և մանկա-
վարժական խորհուրդների ներկայացրած տեղեկագրերը, հաշիւները և
եւկեմտական նախահաշիւները, քննում և լուծում է ղարանոցական մար-
մինների ու պաշտօնեաների տարաձայնութիւնները ու բողոքները,
ինչպէս և այս մարմինների և պաշտօնեաների դէմ յարուցուած բո-
ղոքները, ամեն տարի կազմում է միմիայն ուսումնական և տնտեսա-
կան տեղեկագիր Թեմի բոլոր ուսումնարանների համար և ներկայաց-

նում է Վեհափառ Կաթողիկոսին. ընտրում է Վեհափառ Կաթողիկոսի հաստատութեամբ մի, կամ միքանի թեմական տեսուչներ թեմի ծխական և վանքական դպրոցներին վերահսկելու և պարբերաբար թեմական ժողովին ղեկուցանելու համար»:

Ահա այսպիսի ձև են ստանում թեմական խորհուրդները հրահանգական կարգադրութեամբ: Ամենից առաջ ծագում է մի հարց, թէ ինչ օրինական հիմունքներ ունի Ամենայն Հայոց Կաթողիկոսը մի այդպիսի կարգադրութիւն անելու, թեմական խորհուրդները սահմանելու, կամ ճիշտ ասած, ինքնածին թեմական խորհուրդներին որոշ օրինականութիւն տալու, թէ և ժամանակաւոր, թէ և նոյն իսկ հրահանգական ձևով:

Անշուշտ մեր հոգևոր կառավարութիւնը իր այդ կարգադրութիւնը անելիս՝ ի նկատի է ունեցել «Պօլօթենիէի» 1178 և 1208 յօդուածները:

1178-դ յօդուածը ասում է. «Հայոց եկեղեցու թեմական առաջնորդները առանձին ուշադրութիւն են դարձնում ծխական և վանքական ուսումնարանների վրայ ընդհանրապէս և իրենց թեմերն այցելելու ժամանակ մասնաւորապէս: Նպաստելով բոլոր ձեռնհաս միջոցներով այդ ուսումնարանների բարւոքման և բարգաւաճման, նրանք առանձնապէս ջանք են դնում այդ ուսումնարաններում կանոնաւոր և մտոյչի դասաւանդութեան վրայ, պահպանելով ուսուցանողների և աշակերտների մէջ բարի վարք»:

1208-դ յօդուածումը ասում է. «Հայ լուսաւորչական թեմական դպրոցների դասընթացի ծրագիրը և նրանց ներքին կարգապահութեան կանոնները մշակում է թեմական դպրանոցի հոգևոր իշխանութիւնը՝ ղեկավարութեամբ և հսկողութեամբ արքեպիսկոպոսների. այդ ծրագիրը և կանոնները քննում են էջմիածնի հայ լուսաւորչական Սինոդի կողմից և հաստատում են Բարձրագոյն կառավարութիւնից»:

Անկասկած թեմական առաջնորդների բազմակողմանի և ծանր պաշտօնը մասամբ թեթեւացնելու համար սահմանում է թեմական խորհուրդ, իբրև նրան ստորադրեալ կօյնգիալ և խորհրդակցական մարմին: Թեմի ծխական հիմնարկութիւնների վերաբերմամբ թեմական խորհուրդները նոյն պաշտօնը պիտի կատարեն, ինչ պաշտօն որ կատարում է թեմական դպրանոցի հոգաբարձական խորհուրդը այդ դպրոցի վերաբերմամբ:

Մինչև այսօր գոյութիւն չունի մեղանում և ոչ մի այլ վարչական մարմին, որը ղեկավարէր ծխական դպրոցական գործը ամբողջ թեմում:

Ոչ մի տեղ «Պօլօթենիէում» չէ յիշուած, թէ ով է նոյն դերը կատարում ոչ թեմական դպրոցների վերաբերմամբ, ինչ դեր որ յատկացնում է «Պօլօթենիէի» 1208-դ յօդուածը թեմական դպրոցի վարչութեան (այժմ հոգաբարձական խորհրդին) հոգևոր սեմինարիայի վերաբերմամբ: Այս տեսակէտից թեմական խորհուրդները սահմանելը ոչ մի արգելք չի կարող դնել, եթէ «Պօլօթենիէի» վերոյիշեալ յօդուածի համաձայն վարուի մեր հոգևոր իշխանութիւնը թեմական խորհուրդների վերաբերմամբ:

Թեմական խորհուրդների վերաբերմամբ կառավարութեան հաւանութիւն առայժմ բացակայում է: Այս տարուայ մայիսին Ամենայն Հայոց Կաթողիկոսը մի կարգադրութիւն ևս արեց թեմական խորհուրդների վերաբերմամբ: Թեմական խորհուրդների տնօրինութեան և հսկողութեան յանձնուեց մեր բոլոր թեմական և վանքական կայուածների կառավարութիւնը:

Օրէնքի տեսակէտից—եթէ թեմական խորհուրդների գոյութիւնը հաւանութիւն դնի կառավարութիւնից—այդպիսի կարգադրութիւն ոչ մի հակաօրինական կէտ չէ պարունակում:

Իսկ այդ կաթողիկոսական կարգադրութեան նպատակայարմարութիւնը ակներև է: Անյետաձգելի պահանջ է զգացում մեր թեմական առաջնորդներին տալ մի դպրոցական—տնտեսական խորհրդակցական մարմին, որի օգնութեամբ թեմական առաջնորդը կարողանայ վարել ամբողջ թեմի տնտեսական և դպրոցական գործը, կոնսիստորիայի իրաւասութեան վերապահելով ընդհանուր հսկողութեան և դատական—վարչական պաշտօն համաձայն «Պօլօթենիէի» 1188 յօդուածի ոգուն և իմաստին:

Պէտք է նկատել, որ առաջին անգամը չէ, որ մեր հոգևոր կառավարութեան այս կամ այն ծրագիրները և կարգադրութիւնները ժամանակաւոր գործածութիւն են ստացել առանց կառավարութեան նախնական հաւանութեան:

Յաճախ պատահել է, որ մարմնաւոր իշխանութիւնը, ստանալով մեր հոգևոր իշխանութիւնից մշակուած և գործադրող կանոններ, երկար քննադատութեան է ենթարկել նրանց, նորանոր բանակցութիւնների մէջ մտնելով մեր հոգևոր իշխանութեան հետ և միևնոյն ժամանակ չէ արգելել հոգևոր իշխանութեան այդ կանոնների ժամանակաւոր գործունէութիւնը:

Р. Տ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի անսպասելի մահը ինձ օտարում է դադարեցնել իմ տեսութիւնները:

Այդ խնդիրները անշուշտ նոյն statu quo դրութեան մէջ պիտի մնան մինչ նոր ազգընտիր Հայրապետի գահակալութիւնը: Այժմս ամեն մի շիտակ հայ մարդ, ամեն մի անկաշառ գրիչ և անկախ ձայն պիտի ջանայ և, գլխաւորը, գործէ, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան գահը բարձրանայ մի այնպիսի անձնաւորութիւն, որը շարունակէ և իրագործէ Մատթէոս II Կաթողիկոսի սկսած բարեփոխութիւնները:

З У К Л О Т У:

Временныя правила объ управленіи имуществами армяно-григоріанскихъ церквей въ предѣлахъ Кавказскаго Намѣстничества.

А. Относительно имуществъ, принадлежащихъ церквамъ.

1) Управление имуществомъ армяно-григоріанскихъ церквей ввѣряется приходскимъ попечительствамъ въ составѣ ктитора или старосты церкви и членовъ, въ числѣ отъ 2 до 4, съ равными правами, избираемыхъ прихожанами изъ своей среды на 3 года.

2) Избраніе членовъ приходскихъ попечительствъ производится въ общихъ собраніяхъ прихожанъ по большинству голосовъ присутствующихъ и утверждается епархіальнымъ начальникомъ.

3) Въ общихъ собраніяхъ прихожанъ имѣютъ право голоса всѣ принадлежащія къ приходу лица, мужского пола, достигшія 25-лѣтняго возраста, пользующіяся законною правоспособностью къ исполненію общественныхъ обязанностей и состоящія прихожанами церкви не менѣе двухъ лѣтъ.

4) На обязанности приходскихъ попечительствъ лежитъ забота объ устройствѣ въ приходѣ, съ надлежащаго разрѣшенія, школы, больницы, богадѣленъ, пріютовъ и другихъ благотворительныхъ заведеній.

5) Если бы церковныхъ доходовъ оказалось недостаточно для удовлетворенія всѣхъ потребностей прихода, то попечительство составляетъ предположеніе о назначеніи опредѣленнаго сбора съ прихожанъ, одновременнаго или постояннаго, деньгами или натурою. Такое предположеніе предлагается на обсужденіе общаго собранія прихожанъ и, по принятіи его и составленіи о томъ приговора, дѣлается обязательнымъ для изъясвившихъ по оному согласію.

6) Ежегодная смѣта по приходу и расходу, составленная попечительствомъ, одобряется общимъ собраніемъ прихожанъ и утверждается епархіальнымъ начальникомъ.

7) Приходскія попечительства обязаны отчетностью какъ передъ епархіальнымъ начальникомъ, такъ и передъ общимъ собраніемъ прихожанъ, которые избираютъ ежегодно для провѣрки отчетовъ особую ревизіонную комиссію.

Б. Относительно имуществъ, принадлежащихъ духовнымъ семинаріямъ.

1) Имуществомъ духовныхъ семинарій (Св. Зак. т. XI ч. I изд. 1896 г. ст. 1206) управляютъ особые попечительные совѣты изъ 12 человекъ подъ предѣдательствомъ епархіальнаго начальника.

2) Для избранія членовъ попечительнаго совѣта созывается, подъ предсѣдательствомъ епархіальнаго начальника, или особо имъ назначеннаго лица, собраніе выборщиковъ епархіи: по два отъ церквей города, въ которомъ находится семинарія, избираемыхъ общимъ собраніемъ прихожанъ по большинству голосовъ присутствующихъ, по одному отъ другихъ городскихъ церквей епархіи, избираемыхъ тѣмъ же порядкомъ, и по одному выборщику отъ каждого благочинническаго округа, избираемыхъ собраніемъ представителей сельскихъ церквей. Члены попечительнаго совѣта избираются срокомъ на 4 года.

3) Члены попечительнаго совѣта утверждаются въ должности верховнымъ патріархомъ-католикосомъ всѣхъ армянъ.

4) Половина состава членовъ попечительнаго совѣта выбываетъ черезъ два года, причемъ въ первый разъ по жребію.

5) Собраніе выборщиковъ епархіи избираетъ, на срокъ полномочій попечительнаго совѣта, ревизіонную комиссію, заключеніе которой сообщается эчміадзинскому синоду.

6) Предварительный ежегодный смѣты, а равно отчеты попечительныхъ совѣтовъ утверждаются эчміадзинскимъ синодомъ.

В. Относительно имуществъ, принадлежащихъ монастырямъ.

1) Управление имуществомъ, принадлежащими монастырямъ, поручается монастырскому начальству.

2) Для наблюденія за правильнымъ веденіемъ управленія имуществомъ, принадлежащими монастырямъ, могутъ быть привлекаемы епархіальными начальниками въ помощь монастырскому начальству и лица свѣтскія.

Պ Ա Տ Ժ Ե Ն.

ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՅ-ԼՈՒՍԱՒՈՐԶԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻՆԵՐԻ ԳՈՅՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՓՈԽԱՐԲԱՅՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ

А. Եկեղեցիներին պատկանող գույքի վերաբերմամբ

1) Հայ-լուսավորչական եկեղեցիների գույքերի կառավարութիւնը յանձնում է ծխական հոգաբարձութիւններին, բաղկացած երեցփոխից և անդամներից՝ թուով 2—4 հաւասար իրաւունքներով, որոնց ընտրում են ծխականները իրանց միջից 3 տարով:

2) Ծխական հոգաբարձութիւնների անդամների ընտրութիւնը կատարում է ծխականների ընդհանուր ժողովներում ներկայ եղողների ձայների մեծամասնութեամբ և հաստատում է թեմական առաջնորդի:

3) Ծխականների ընդհանուր ժողովներում ձայնի իրաւունք ունեն ծխին պատկանող արական սեռի 25 տարի հասակ ունեցող բոլոր անձերը, որոնք օրինական իրաւունք են վայելում հասարակական պարտաւորութիւններ կատարելու և եկեղեցու ծխականներ են հաշւում ոչ պակաս քան 2 տարի:

4) Ծխական հոգաբարձութիւնի վրայ պարտականութիւն է դրւում հոգ տանելու պատշաճաւոր թոյլտուութեամբ հիմնելու դպրոցներ, հիւանդանոցներ, ապաստարաններ և այլ բարեգործական հաստատութիւններ:

5) Եթէ եկեղեցական եկամուտները բաւարարութիւն ապաւն չը լինեն ծխերի բոլոր կարիքները հոգալու, հոգաբարձութիւնը առաջադրութիւն է տնւում ծխականներից որոշ տուրք նշանակելու վերաբերմամբ. այդ տուրքը կարող է լինել միաժամանակ կամ մշտական, դրամով կամ իրերով: Այդ առաջադրութիւնը առաջարկում է ծխականների ընդհանուր ժողովը քննութեան և նրա կողմից ընդունուելուց և այդ մասին վճիռ կայացնելուց յետոյ դառնում պարտաւորական համաձայնութիւն յայտնողների համար:

6) Իւրաքանչիւր տարւայ ել և մուտի նախահաշիւը՝ կազմած հոգաբարձութեան կողմից՝ ստանում է ծխականների ընդհանուր ժողովի հաւանութիւնը և հաստատում է թեմական առաջնորդի:

7) Ծխական հոգաբարձութիւնները պարտաւոր են հաշիւ տալ թէ վիճակաւոր առաջնորդներին և թէ ծխականների ընդհանուր ժողովներին, որոնք իւրաքանչիւր տարի ընտրում են առանձին վերաստուգող յանձնաժողովներ՝ հաշիւները ստուգելու համար:

Б. Հայոց նոգեւոր քեմական դպրոցներին պատկանելի գույքի կառավարութեան մասին:

1) Հոգեւոր թեմական դպրոցների գույքը (համաձայն 1896 թուի հրապարակած օրինաց XI հատորի I մասի 1206 յօդուածի) կառավարում են 12 հոգուց բաղկացած հոգաբարձական առանձին խորհուրդներ, որոնց նախագահում է առաջնորդը:

2) Հոգաբարձական խորհրդի անդամների ընտրութեան համար թեմական առաջնորդի, կամ նրա կողմից յատկապէս նշանակուած անձի նախագահութեամբ հրաւիրում է թեմի ընտրողների ժողով՝ դպրոցը զանաւազան իւրաքանչիւր եկեղեցուց ծխական ընդհանուր ժողովի ձայնից մեծամասնութեամբ ընտրուած երկու հոգի, թեմի միւս քաղաքների եկեղեցիներից իւրաքանչիւրի կողմից նոյն ձևով ընտրուած մի հոգի, գիւղական շրջաններից իւրաքանչիւր գործակալութիւնից մի մի հոգի, որոնք պէտք է ընտրուեն գիւղական եկեղեցիների ներկայացուցիչների կողմից: Հոգաբարձութեան անդամներն ընտրում են չորս տարի ժամանակով:

3) Հոգաբարձական խորհրդի անդամներն իրանց պաշտօնում հաստատում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից:

4) Հոգաբարձական կազմի կէտը երկու տարուց յետոյ թողնում է իւր պաշտօնը՝ առաջին խորհրդի անդամները վիճակով, իսկ այնուհետև հերթով:

5) Թեմի ընտրողների ժողովը հոգաբարձական ժողովի իրաւասութեան շրջանի համար ընտրում է վերաստուգող յանձնաժողով, որի եղբակցացութիւնը հաղորդում է Ս. Եջմիածնի Սինոդին:

6) Կանխապէս կազմած նախահաշիւը, ինչպէս և հոգաբարձական ժողովի հաշիւը հաստատում է Ս. Եջմիածնի Սինոդի կողմից:

Բ. Վանքապատկան գոյքերի կառավարութեան մասին:

- 1) Վանքապատկան գոյքերի և կալուածքների կառավարութիւնը յանձնուած է վանքական վարչութեան (монастырскому началству)
- 2) Վանքապատկան գոյքի կանոնաւոր կառավարութեան վրայ հսկելու համար թեմական առաջնորդները կարող են հրաւիրել և աշխարհականներին օգնելու վանքական միարանութեան:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

	Ծրես
Զօն	1
Երկու խօսք	3
I. Նոր ուղղութիւն	5
II. Ժողովրդական սկզբունք և ժողովրդի անտարբերութիւն	13
III. Թեմական վերանորոգութեան նախաձեռնութիւն	16
IV. Թեմական վերանորոգութեան նպատակայարմարութիւն	19
V. Թեմական վերանորոգութիւն և տիրող օրէնք	22
VI. Թեմական Առաջնորդների ընտրութիւնը և 1836 թուի «Պօլօթենիէն»	28
VII. Թեմական ժողովներ և նրանց իրաւասնութիւնը	33
VIII. Թեմական խորհուրդներ և նրանց իրաւասնութիւնը	38
Յաւելուած	43
Ժամանակաւոր կանոններ հայ-լուսաւորչական եկեղեցիների գոյքերի կառավարութեան մասին	44

MS 16996-58

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Երես:	Տող:	Տպուած է:	Պէտք է:
5	4	մի երևոյթ, որ նորընտիր	մի երևոյթ. նորընտիր
6	26	կաթուղիկոսութեան	Կաթուղիկոսին
7	12	կաթուղիկոսութիւնը	Կաթուղիկոսը
10	23	յանձնեն	յանձնուն
12		ԺՈՂՈՎՐԴԻ ՍԿՋԲՈՒՆՔ	ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍԿՋԲՈՒՆՔ
13	7	Մար Աթոռի	Մայր Աթոռի
14	5	կառարում	կառավարում
16	6	հնդարձակ	ընդարձակ
26	9	Սինոդի Պրօկուրորի	Սինոդի և պրօկուրորի
30	31	Այժմ կաթուղիկոսութեան	Այժմեան կաթուղիկոսութեան

A P.M.
H3-423a

ԳՐԱԸ 25 ԿՕՊԵԿ.



Apr. 1

3-4232